



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ



ԱՐՏԱՀԵՐԹ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՀՀ ՆԵՐՔԻՆ
ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ
ՎԱՅՐԵՐՈՒՄ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՈՒԺԻ, ՀԱՏՈՒԿ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ԶԵՆՔԻ
ԳՈՐԾԱԴՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԵՐԵՎԱՆ 2024

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

- ՀՀ – Հայաստանի Հանրապետություն
- ՄԻՊ – Մարդու իրավունքների պաշտպան
- ԿԱՄ – Կանխարգելման ազգային մեխանիզմ
- ՀՀ ԳԴ – ՀՀ գլխավոր դատախազություն
- ՀՀ ՔԿ – ՀՀ քննչական կոմիտե
- ՀՀ ՆԳՆ – ՀՀ ներքին գործերի նախարարություն
- ՀՀ ԱԱԾ – ՀՀ ազգային անվտանգության ծառայություն
- ՁՊՎ – Ձեռքարկվածներին պահելու վայր
- ՀՀ ԱՆ – ՀՀ արդարադատության նախարարություն
- ՔԿՀ – Քրեակատարողական հիմնարկ
- ՊՈԱԿ – «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի

իրականացման կենտրոն» ՊՈԱԿ

- ՄԻԵԴ – Մարդու իրավունքների եվրոպական դատարան
- ԽԿԿ – Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը

նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտե

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	5
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	7
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՈՒԺԻ, ՀԱՏՈՒԿ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ԶԵՆՔԻ ԳՈՐԾԱԴՐՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ.....	9
1. Քրեակատարողական հիմնարկներում և ձերբակալվածներին պահելու վայրերում ոստիկանության և քրեակատարողական ծառայողների կողմից ազատությունից զրկված անձանց նկատմամբ ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի գործադրման հիմքերը, պայմանները և սահմանները.....	10
1.1. Ներգործության իրավաչափությունը պայմանավորող նորմատիվ հիմքի պարտադիրությունը և հատուկ իրավական պահանջները.	10
1.2. Քրեակատարողական հիմնարկներում և ձերբակալվածներին պահելու վայրերում ազատությունից զրկված անձանց նկատմամբ ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի կիրառման իրավաչափության պայմանները և սահմանները.	17
2. Ներգործության ուժային միջոցների գործադրման փաստաթղթավորումը և վերահսկողությունը.....	20
3. ՔԿՀ և ՁՊՎ ծառայողների մասնագիտական պատրաստվածության ապահովումը և կարողությունների շարունակական կատարելագործումը.	24
4. Իրավապահ գործառույթներ իրականացնող պետական մարմինների ծառայողների հնարավոր ներգրավվածությունը ՔԿՀ-ներում և ՁՊՎ-ներում ներգործության ուժային միջոցների գործադրմանը.....	27
5. ՔԿՀ և ՁՊՎ ծառայողների սպառազինության լրակազմում գտնվող միջոցները և դրանց գործադրման թույլատրելիության չափանիշները.....	29

6. Քրեակատարողական հիմնարկներում և ՁՊՎ-ներում հատուկ միջոցների և զենքերի պահպանությունը, ինչպես նաև դրանց խոտանման, նոր միջոցներով փոխարինման գործընթացի պատշաճ կանոնակարգումը.	38
7. ՔԿՀ և ՁՊՎ ծառայողների կողմից զենքի բաց կրումը՝ որպես անթույլատրելի հանգամանք.	41
8. Քրեակատարողական հիմնարկներում և ձերբակալվածներին պահելու վայրերում ազատությունից զրկված անձանց նկատմամբ ծառայողների կողմից անհամաչափ ներգործության գործադրման նկատմամբ վերահսկողության կառուցակարգերը և դրանց ներկայացվող պահանջները.	42
8.1 Քրեակատարողական և ոստիկանության ծառայողների կողմից անհամաչափ ներգործության գործադրման կապակցությամբ նախաձեռնված քրեական վարույթները և դրանց ներկայացվող պահանջները.	42
8.2. Քրեակատարողական հիմնարկներում և ՁՊՎ-ներում ծառայողների կողմից ազատությունից զրկված անձանց նկատմամբ ներգործության միջոցների կիրառման ուսումնասիրությունը և ծառայողական քննությունները.	46
8.3. Քրեակատարողական հիմնարկներում և ձերբակալվածներին պահելու վայրերում ծառայողների կողմից ազատությունից զրկված անձանց նկատմամբ ներգործության միջոցների գործադրման իրավաչափության նկատմամբ վերահսկողության արդյունավետության երաշխիքներ.	48
9. Պատշաճ բժշկական օգնության երաշխավորումը՝ որպես գործադրված ներգործության միջոցների հետևանքների մեղմման երաշխիք.	55
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.	59

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, ինչպես նաև Հայաստանի կողմից վավերացրած միջազգային փաստաթղթերը հռչակում են խոշտանգումների, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի բացարձակ արգելքը, որից ուղղակիորեն բխում է միջազգայնորեն ընդունված պահանջներին և չափանիշներին համապատասխան համալիր միջոցառումների անցկացումը:

Խոշտանգման բացարձակ արգելքի համակողմանի ապահովման տեսանկյունից առանցքային նշանակություն ունի դրա դեմ համակարգային պայքարի արդյունավետ կառուցակարգերի ներդրումն ու կատարելագործումը, ինչն իր հերթին ենթադրում է օրենսդրական դաշտում և իրավակիրառ պրակտիկայում շարունակական բարեփոխումների իրականացում:

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՀ սահմանադրական օրենքը ՄԻՊ-ին է վերապահել «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ» ՄԱԿ-ի՝ 1984 թվականի կոնվենցիայի 2002 թվականի դեկտեմբերի 18-ին ընդունված կամընտիր արձանագրությամբ սահմանված ԿԱՄ-ի կարգավիճակը:

Սահմանադրական օրենքի 28-րդ հոդվածը սահմանում է ՄԻՊ-ի լիազորությունները ԿԱՄ-ի կարգավիճակով քրեակատարողական հիմնարկներ և ձերբակալված անձանց պահելու վայրեր պարբերական, ինչպես նաև ըստ անհրաժեշտության այցեր կատարելու հնարավորությունը:

ԿԱՄ-ի կարգավիճակով ՄԻՊ-ի գործունեությունն ուղղված է երկրում յուրաքանչյուր անձի պաշտպանությանը խոշտանգումից, արժանապատվությունը նվաստացնող կամ անմարդկային վերաբերմունքից ու պատժից, որոնք հավաքական հասկացությամբ կոչվում են վատ վերաբերմունք:

Անկասկած, այս համատեքստում էապես կարևոր է քրեակատարողական հիմնարկներում և ձերբակալված անձանց պահելու վայրերում ազատությունից զրկված անձանց նկատմամբ՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով գործադրվող ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի գործադրման իրավաչափության ապահովումը:

Հարկ է հատուկ ընդգծել, որ տարիներ ի վեր՝ Պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեության վերաբերյալ տարեկան զեկույցներում՝ ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի գործադրման վերաբերյալ արձանագրված խնդիրներն իրենց լուծումը դեռևս չեն ստացել, ինչն էլ հանդիսացել է սույն արտահերթ զեկույցի հրապարկման պատճառներից մեկը:

Քննարկվող թեման կարևոր է այն առումով, որ գործադրվող ներգործության միջոցների իրավաչափության ցանկացած սահմանազանցում կարող է որակվել որպես խոշտանգում կամ վատ վերաբերմունքի այլ ձև:

Քրեակատարողական հիմնարկներում և ձերբակալված անձանց պահելու վայրերում պահվող անձինք (հատկապես՝ կանայք, անչափահասները, առողջական խնդիրներ ունեցող անձինք և այլք) այս առումով բավական խոցելի են՝ պայմանավորված, օրինակ, ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքների ոտնահարման արդյունքներով վրա հասնող հետևանքներով, գործադրվող ներգործության միջոցների արդյունքում վատթարացող առողջական վիճակով և այլն:

Անչափ կարևոր է, որ պետությունը քայլեր ձեռնարկի հնարավորինս մանրամասն իրավական ընթացակարգերի բաղադրիչների ներդրման և շարունակական կատարելագործման հարցերում՝ ապահովելու համար ազատությունից զրկված անձանց վատ վերաբերմունքի չարժանանալու բացարձակ պահանջը:

Այսպիսով, ոլորտն ունի թե՛ նախկինում արձանագրված, և թե՛ նոր ի հայտ եկած խնդիրների համակարգային ուսումնասիրության, դրանց լուծման և կոնկրետ ուղղություններում աշխատանքների նախանշման կարիք, որոնք ներկայացված են սույն արտահերթ հրապարակային զեկույցի շրջանակներում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն զեկույցը հիմնված է ՄԻՊ-ի՝ որպես ԿԱՄ-ի կողմից իրականացված մշտադիտարկման և ըստ անհրաժեշտության չհայտարարված այցերի ընթացքում արձանագրված խնդիրների, այդ խնդիրների լուծման առաջարկների դիտարկման արդյունքների, միջազգային կառույցների կողմից առաջադրված ուսումնասիրությունների, չափորոշիչների և ներպետական օրենսդրության վերլուծության վրա:

ԿԱՄ-ի կողմից ուսումնասիրման առարկա են դարձել ազատությունից զրկված անձանց նկատմամբ ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի գործադրման վերաբերյալ Եվրոպայի խորհրդի Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի կողմից՝ անդամ պետություններ մշտադիտարկման այցերի արդյունքում կազմված զեկույցները, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռները: Ուսումնասիրության առարկա են դարձվել նաև ներպետական օրենսդրությունը, ինչպես նաև դրա համապատասխանությունը միջազգային չափանիշներին:

ՔԿՀ-ներ և ՁՊՎ-ներ կատարած մշտադիտարկման այցերի ընթացքում ուսումնասիրվել են հատուկ միջոցները, դրանց պահման պայմանները, դրանց կիրառմանը, արձանագրմանը, համապատասխան զեկույցների կազմմանը և հաշվետվողականությանն առնչվող հարցերը:

ՄԻՊ-ի աշխատակազմում իրականացվել են նաև մասնագիտական քննարկումներ, որոնց հիման վրա սույն արտահերթ հրապարակային զեկույցը ոչ միայն վեր է հանում ազատությունից զրկված անձանց նկատմամբ ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի հնարավոր գործադրման հետ կապված խնդիրները, այլև մասնագիտական վերլուծությունների հիման վրա ներկայացնում է արձանագրված խնդիրների լուծմանն ուղղված իրավական և գործնական մեխանիզմներ՝ ոլորտային նորմատիվ իրավական ակտերում անհրաժեշտ փոփոխությունների կատարմամբ:

Զեկույցի մշակման շրջանակներում հարցումներ են ուղարկվել ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ ներքին գործերի նախարարություն, ՀՀ գլխավոր դատախազություն և ՀՀ քննչական կոմիտե, որտեղից ստացված պատասխաններն ամփոփվել են այս զեկույցում:

Զեկույցը պարունակում է ընդհանուր խնդիրը մասնավորեցնող պարագրաֆներ, իսկ ուսումնասիրության արդյունքների հիման վրա ներկայացվում են առաջարկություններ:

Զեկույցը ներառում է ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի հնարավոր գործադրմանն առնչվող միջազգային իրավական չափանիշների և ներպետական օրենսդրության, ինչպես նաև ազատությունից զրկման վայրերում արձանագրված պրակտիկայի վերլուծություն: Անդրադարձ են կատարվում նաև ֆիզիկական ուժի,

հատուկ միջոցների և զենքի գործադրման հիմքերին և պայմաններին, դեպքերի փաստագրմանը, զեկուցագրերի հատուկ ձևերի հաստատմանը, առանձին հատուկ միջոցների կիրառմանն ու տնօրինմանն առնչվող խնդիրներին, ծառայողների շարունակական վերապատրաստմանը և այլն:

Զեկույցում ներկայացվում են ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի գործադրման ոլորտին առնչվող խնդիրների լուծմանն ուղղված առաջարկությունները, որոնք վերաբերելի են թե՛ ՔԿՀ-ներին, թե՛ ՁՊՎ-ներին:

**ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ
ԱՆՁԱՆՑ ՊԱՇՏՆՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՈՒԺԻ, ՀԱՏՈՒԿ
ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՁԵՆՔԻ ԳՈՐԾԱԴՐՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ
ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ**

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների և ՀՀ ներքին գործերի նախարարության ձերբակալվածներին պահելու վայրերի ծառայողներն իրենց պարտականությունների կատարման ընթացքում իրավասու են կիրառել ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և զենք:

Այս առնչությամբ ՄԻՊ դիտարկումները մշտապես ներկայացված են եղել Մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի տարեկան զեկույցներում¹:

Այնուամենայնիվ, հաշվի առնելով ՔԿՀ-ներում և ՁՊՎ-ներում ազատությունից զրկված անձանց նկատմամբ ներգործության հիշյալ միջոցների գործադրման արդյունքում վերջիններիս իրավունքների պաշտպանության առաջնային կարևորությունը՝ հարկ է անդրադառնալ ոլորտային միջազգային չափանիշներին և ներպետական օրենսդրությանը, դրանց համապատասխանությանը, ինչպես նաև գործնականում դրանց կիրառման գործընթացում արձանագրված խնդիրներին:

¹ Տե՛ս, Մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեության վերաբերյալ տարեկան զեկույցները, հասանելի է՝ <https://www.ombuds.am/am/site/SpecialReports> հղումով:

1. Քրեակատարողական հիմնարկներում և ձերբակալվածներին պահելու վայրերում ոստիկանության և քրեակատարողական ծառայողների կողմից ազատությունից զրկված անձանց նկատմամբ ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի գործադրման հիմքերը, պայմանները և սահմանները.

1.1. Ներգործության իրավաչափությունը պայմանավորող նորմատիվ հիմքի պարտադիրությունը և հատուկ իրավական պահանջները.

Ազատությունից զրկված անձի կողմից իրավախախտման, ՔԿՀ կամ ՁՊՎ ծառայողների օրինական պահանջները չկատարելու, նրանց պարտականությունների կատարմանը խոչընդոտելու՝ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում վերջիններս իրավասու են անազատության մեջ գտնվող անձանց նկատմամբ ունենալ որոշակի ներգործություն, իսկ որոշ դեպքերում այն կարող է լինել իրավիճակը վերահսկելու միակ միջոցը:

ՔԿՀ և ՁՊՎ ծառայողների կողմից ներգործության միջոցների գործադրման իրավաչափությունը պայմանավորող առաջնային պայմանը այն կանոնակարգող նորմատիվ հիմքի պարտադիրությունն է՝ ծառայողների և ազատությունից զրկված անձանց իրավունքների և պարտականությունների հստակ նախատեսմամբ:

Նշվածը վերաբերում է քրեակատարողական և ոստիկանության ծառայողների կողմից ազատությունից զրկված անձանց նկատմամբ ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի կիրառման հիմքերը, պայմանները և սահմանները իրավական որոշակիության սկզբունքին համապատասխանող իրավակարգավորումներով պատշաճ նախատեսմանը՝ հաշվի առնելով ազատությունից զրկման վայրերի առանձնահատկությունները և պետական վերահսկողության ներքո գտնվող անձանց նկատմամբ ներգործության միջոցների կիրառման առավել խիստ միջազգային պահանջները և չափանիշները:

Նշվածը բխում է, նախևառաջ, այն հանգամանքից, որ համաձայն ՀՀ սահմանադրության 6-րդ հոդվածի՝ հանրային իշխանության մարմիններն իրավասու են կատարել միայն այնպիսի գործողություններ, որոնց կատարման համար լիազորված են ՀՀ օրենսդրությամբ: Միաժամանակ, այն կարևորվում է ներգործության միջոցի կիրառման իրավաչափության նկատմամբ վերահսկողության շրջանակներում ներգործությունը կիրառած ոստիկանության կամ քրեակատարողական ծառայողի գործողությունների իրավաչափության հարցը քննարկելիս:

Վերոնշյալի կապակցությամբ ՔԿՀ-ներում և ՁՊՎ-ներում ազատությունից զրկված անձանց նկատմամբ ուժի կիրառման առնչությամբ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 2006 թվականի հունվարի 11-ի «Եվրոպական բանտային կանոնների մասին» թիվ (2006)2 հանձնարարականի² 64.1-րդ կետը նախատեսում է,

² Այսուհետ՝ Եվրոպական բանտային կանոններ կամ ԵԲԿ, հասանելի է <https://rm.coe.int/16806f5b92> կայքէջում:

որ բանտի աշխատակիցները չպետք է բանտարկյալների նկատմամբ ուժ գործադրեն, բացառությամբ երբ դրա նպատակն ինքնապաշտպանությունն է, կամ, երբ բանտարկյալները փորձում են փախուստ կատարել կամ ակտիվ կամ պասիվ ֆիզիկական դիմադրություն ցուցաբերել օրինական կարգադրությանը, ընդ որում, ուժի գործադրումը ցանկացած պարագայում պետք է լինի որպես վերջին միջոց:

ԵԲԿ 65-րդ կետում հստակ արձանագրված է, որ ուժի գործադրման վերաբերյալ պետք է լինեն մանրակրկիտ ընթացակարգեր, այդ թվում՝ կարգավորող դրույթներ հետևյալի մասին.

ա. գործադրվող ուժի թույլատրելի տարբեր տեսակները,

բ. այն հանգամանքները, որոնցում ուժի յուրաքանչյուր տեսակ կարող է գործադրվել,

գ. ուժի տարբեր տեսակներ գործադրելու իրավունք ունեցող աշխատակիցները,

դ. որևէ ուժ գործադրելու համար պահանջվող թույլտվության մակարդակը, և

ե. ուժ գործադրելուց հետո լրացման ենթակա հաշվետվությունները:

Քրեակատարողական ծառայողների կողմից ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ կամ զենք գործադրելու հիմքերը սահմանված են «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքում, որի 47-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեակատարողական ծառայողի օրինական պահանջները չկատարելու կամ պարտականությունների կատարմանը խոչընդոտելու՝ սույն օրենքով նախատեսված դեպքերում քրեակատարողական ծառայողն իրավունք ունի գործադրելու ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և զենք:

Համաձայն «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի՝ քրեակատարողական ծառայողն իրավունք ունի գործադրելու ֆիզիկական ուժ քրեակատարողական հիմնարկում գտնվող անձի կողմից քրեակատարողական ծառայողի օրինական պահանջները չկատարելու կամ պարտականությունների կատարմանը խոչընդոտելու յուրաքանչյուր դեպքում:

Ավելին, «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածը սահմանում է քաղաքացիական զենք և հատուկ միջոցների կիրառելու կոնկրետ հիմքերը, որի համաձայն՝

1. Քրեակատարողական հիմնարկներում քաղաքացիական զենք կամ հատուկ միջոցներ կարող են գործադրվել հետևյալ դեպքերում.

1) քրեակատարողական ծառայողների կամ այլ անձանց վրա քրեակատարողական հիմնարկում պահվող անձանց հարձակումը հետ մղելիս.

2) քրեակատարողական հիմնարկների ներքին կանոնակարգի խմբակային խախտումների կամ զանգվածային անկարգությունների ժամանակ.

3) քրեակատարողական ծառայողների և կարգուկանոն հաստատելուն ներգրավված այլ անձանց օրինական պահանջներին չենթարկվելու դեպքում՝

քրեակարարողական հիմնարկում պահվող անձանց հակաօրինական գործողությունները կանխելիս.

4) պատանդներին, զավթված շենքերը, շինությունները, կառույցները և տրանսպորտային միջոցներն ազատելիս.

5) քրեակարարողական հիմնարկում պահվող անձի՝ շրջապատին վնաս հասցնելու փորձը կանխելիս.

6) սույն օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում»:

Նույն օրենքի 50-րդ հոդվածի համաձայն՝

1. Քրեակարարողական հիմնարկներում զենք գործադրվում է հետևյալ դեպքերում.

1) քրեակարարողական ծառայողների, քրեակարարողական հիմնարկում գտնվող անձանց կյանքին կամ առողջությանը սպառնացող հարձակումները հետ մղելիս, ինչպես նաև զենքին տիրելու փորձերը խափանելիս.

2) քրեակարարողական հիմնարկների շենքերի, շինությունների, տրանսպորտային միջոցների վրա խմբակային կամ զինված հարձակումը խափանելիս.

3) զինված դիմադրություն ցույց տվող, ինչպես նաև քրեակարարողական ծառայողի կամ քրեակարարողական հիմնարկում գտնվող այլ անձի կյանքի և առողջության դեմ ուղղված ծանր հանցանք կատարող անձանց դեպքի վայրում ձերբակալելիս.

4) պատանդներին, զավթված շենքերը, շինությունները, կառույցները և տրանսպորտային միջոցներն ազատելիս.

5) քրեակարարողական ծառայողի՝ զենքը հանձնելու պահանջը կատարելուց հրաժարվող անձին ձերբակալելիս.

6) քրեակարարողական հիմնարկում պահվող անձին բռնի ուժով ազատելու փորձը կանխելիս.

7) զինված կամ տրանսպորտային միջոցի գործադրմամբ հարձակումը հետ մղելիս.

8) քրեակարարողական հիմնարկում պահվող անձանց կողմից քրեակարարողական ծառայողին զենքով կամ այնպիսի առարկաներով մոտենալիս, որոնցով հնարավոր է մարդու առողջությանը վնաս հասցնել՝ տվյալ ծառայողի նշած տարածության սահմանը խախտելու դեպքում.

9) քրեակարարողական հիմնարկներից կամ փոխադրման ընթացքում քրեակարարողական հիմնարկում պահվող անձանց փախուստի փորձը կանխելիս.

10) հրազեն գործադրելու մտադրության մասին նախազգուշացնելիս, տրանսպորտային ազդանշան տալիս և օգնություն կանչելիս:

Հարկ է արձանագրել, որ ՁՊՎ-ներում պահվող ազատությունից զրկված անձանց նկատմամբ ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ կամ զենք գործադրելու հատուկ օրենսդրական ընթացակարգեր նախատեսված չեն:

Ուստի, ՁՊՎ ծառայողները ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ կամ զենք գործադրելիս առաջնորդվում են «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 4-րդ գլխով սահմանված ընդհանուր իրավանորմերով, ինչպես նաև ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության պետի 2011 թվականի մայիսի 30-ի «ՀՀ կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության սպառազինության մեջ ընդգրկված հատուկ միջոցները գործադրելու և դրանք ոստիկանության ծառայողներին հատկացնելու, պահպանելու և պիտանելիությունը պարբերաբար ստուգելու» N 1-Ն հրամանով:

Այսպես, «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն՝ ոստիկանության ծառայողը որպես բացառիկ միջոց գործադրում է ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և հրազեն՝ սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով, այնքանով, որքանով դա անհրաժեշտ է իր պարտականությունները կատարելու համար, եթե այլ միջոցներով այդ պարտականությունների կատարումը հնարավոր չէ ապահովել»:

«Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի համաձայն՝ իրավախախտումները կանխելու կամ խափանելու, իրավախախտներին բռնելու և ոստիկանություն ներկայացնելու, ոստիկանության ծառայողի օրինական պահանջներին չենթարկվելու կամ դիմադրություն ցույց տալու դեպքերում, ինչպես նաև ինքնապաշտպանության նպատակով ոստիկանության ծառայողն իրավունք ունի իրավախախտների նկատմամբ գործադրել ֆիզիկական ուժ (այդ թվում՝ ձեռնամարտի հնարքներ), ինչպես նաև ձեռքի տակ գտնվող անհրաժեշտ առարկաներ, եթե ոչ ուժային միջոցները չեն ապահովում ոստիկանության վրա դրված պարտականությունների կատարումը:

«Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի համաձայն՝ (...) ոստիկանության ծառայողներն անձամբ կամ ստորաբաժանման կազմում ծառայողական պարտականությունները կատարելիս իրավունք ունեն ոստիկանության տրամադրության տակ գտնվող հատուկ միջոցներ գործադրել:

1) քաղաքացիների և ոստիկանության ծառայողի վրա կատարվող հարձակումը խափանելիս.

2) ոստիկանության ծառայողին կամ հասարակական կարգի պահպանության և հանցագործությունների դեմ տարվող պայքարին աջակցող, իրենց հասարակական կամ ծառայողական պարտականությունները կատարող անձանց նկատմամբ ցուցաբերվող դիմադրությունը խափանելիս կամ նրանց օրինական պահանջներին չենթարկվելու դեպքում.

3) իրավախախտման պահին բռնված և փախուստի փորձ կատարող անձանց բռնելիս.

4) երբ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ տվյալ անձը կամ անձինք պատրաստվում են զինված դիմադրություն ցույց տալ.

5) իրավախախտում կատարած անձանց Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված հիմքերով ոստիկանություն բերելիս կամ ձերբակալելիս, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված հիմքերով ձերբակալելիս, ձերբակալված և կալանավորված անձանց ուղեկցելիս կամ նրանց պահպանելիս, երբ վերջիններիս վարքագիծը հիմք է տալիս ենթադրելու, որ նրանք կարող են դիմել փախուստի, վնաս պատճառել իրենց կամ շրջապատին, դիմադրություն ցույց տալ ոստիկանության ծառայողին կամ չենթարկվել նրա օրինական պահանջներին:(...)

9) հանցագործություն կատարող կամ կատարած անձանց հայտնաբերելիս:(...):

Նույն օրենքի 32-րդ հոդվածի համաձայն՝ ոստիկանության ծառայողներն անձամբ կամ ստորաբաժանման կազմում իրավունք ունեն հրազեն գործադրել՝

1) քաղաքացիներին՝ նրանց կյանքի կամ առողջության համար վրանգավոր հարձակումից պաշտպանելիս.

2) ոստիկանության ծառայողի վրա կատարվող հարձակումը հետ մղելու համար, երբ նրա կյանքին կամ առողջությանը վրանգ է սպառնում, ինչպես նաև նրա զենքին տիրանալու փորձը կանխելիս.

3) պատանդներին, ինչպես նաև զավթված պետական պահպանության ենթակա օբյեկտները ազատելիս.

4) կյանքի, առողջության, սեփականության դեմ ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու պահին բռնված և փախուստի փորձ կատարող, ինչպես նաև զինված դիմադրություն ցույց տվող անձանց ձերբակալելիս.

5) (...) պետական մարմինների, կազմակերպությունների զբաղեցրած տարածքների, պետական պահպանության ենթակա օբյեկտների, ինչպես նաև ուղեկցող ստորաբաժանումների վրա խմբակային կամ զինված հարձակումը հետ մղելիս.

6) կյանքի, առողջության, սեփականության դեմ ուղղված ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության կատարման կասկածանքով ձերբակալված, կալանքի կամ ազատազրկման վայրերից փախուստի դիմած անձանց բռնելիս կամ փախուստը խափանելիս, ինչպես նաև նրանց բռնի ազատման փորձերը հետ մղելիս:(...)

Ոստիկանության ծառայողներն իրավունք ունեն հրազեն օգտագործել՝ (...)

2) մարդկանց կյանքին և առողջությանն անմիջականորեն սպառնացող կենդանիներին վնասազերծելիս.

3) զենք օգտագործելու կամ գործադրելու մտադրության մասին նախազգուշական կրակոց արձակելիս, փազնապ հայտարարելիս կամ օգնության կանչելիս:

ՁՊՎ-ներում ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և հրազենի գործադրման հիմքերը, պայմանները, և սահմանները կարգավորող հատուկ իրավական ակտերի, ինչպես նաև ներգործության միջոցների կիրառման հատուկ

մեթոդաբանությամբ մշակված գործնական ուղեցույցների բացակայությունը հանգեցնում է արդեն իսկ իրավապահ մարմինների վերահսկողության ներքո գտնվող և ազատության մեջ գտնվող անձանց նկատմամբ ներգործության միջոցների գործադրման միատեսակ մոտեցումների կիրառմանը և ՁՊՎ-ների՝ որպես ազատությունից զրկման վայրերի առանձնահատկությունների անտեսմանը, ինչը մտահոգիչ է:

Հատկանշական է, որ ազատությունից զրկման վայրերում և հասարակական ու պետական նշանակության այլ վայրերում ներգործության միջոցի կիրառման նպատակները, դրանց կիրառման պայմաններն ու չափանիշները էապես տարբերվում են իրենց հիմնավորումներով: Մասնավորապես, տարբեր են ներգործության միջոցների կիրառման նպատակները, սպառնալիքի բնույթը, վտանգավորությանը և դրան արձագանքելու հրատապությունը, ներգործության միջոցի կիրառման հասարակական վերահսկողությունը և հաշվետվողականությունը, փակ տարածքներում հատուկ միջոցների գործադրման առանձնահատկությունները և այլ հանգամանքներ:

➤ **Ներգործության միջոցի կիրառման նպատակը և համատեքստը.**

Հասարակական և պետական նշանակության այլ վայրերում ներգործության միջոցի կիրառումը ուղղված է հասարակական կարգի, պետական անվտանգության, անձանց իրավունքների և ազատությունների դեմ ուղղված սպառնալիքների անմիջապես արձագանքելուն, օրինակ՝ հանցագործությունների կանխումը, խափանումը, բացահայտումը և այլն: Իսկ ձերբակալվածներին պահելու վայրերում անձինք արդեն իսկ գտնվում են անազատության մեջ, ուստի ներգործության միջոցի կիրառումը հիմնականում ուղղված է ազատությունից զրկված անձի վարքագծի վերահսկմանը, որտեղ կարևոր է հենց ազատությունից զրկված անձի անվտանգության ապահովումը:

➤ **Սպառնալիքի բնույթը, վտանգավորություն և հրատապություն.**

Հասարակական և պետական նշանակության այլ վայրերում ոստիկանության ծառայողները բախվում են անկանխատեսելի և, երբեմն խիստ վտանգավոր իրավիճակների հետ, հաճախ սահմանափակ մարդկային և տեխնիկական ռեսուրսներով: Այս համատեքստում կարող է պահանջվել ներգործության միջոցների կիրառման առավել ճկուն կառուցակարգեր:

Ազատությունից զրկման վայրերի՝ իրավասու մարմինների կողմից վերահսկվող միջավայրը սովորաբար նվազեցնում է անմիջական ռիսկի մակարդակը՝ դարձնելով ներգործության միջոցի կիրառումը պակաս անհրաժեշտ՝ հնարավորություն տալով ոստիկանության ծառայողներին ընտրելու առավել կանոնակարգված և թիրախային միջոցներ և գործողություններ:

➤ **Ներգործության միջոցների կիրառման նկատմամբ հասարակական վերահսկողություն և հաշվետվողականություն.**

Հասարակության անդամների տեսողական, լսողական հասանելիության շրջանակներում ուստիկանության ծառայողների կողմից ներգործության միջոցների կիրառումը հանրային վերահսկողության միջոցով մեծացնում է դեպքերի նկատմամբ հաշվետվողականությունը: Ազատագրկման վայրերում ավելի նվազ է ուղղակի հանրային վերահսկողությունը, ինչը ենթադրում է հատուկ կանոնակարգերի և վերահսկողության ճկուն մեխանիզմների անհրաժեշտություն՝ հնարավոր չարաշահումները կանխելու նպատակով:

➤ **Ազատության մեջ գտնվող անձինք կարող են դիմադրել՝ արդարացնելով ուժի կիրառումը՝** կանխելու անձի փախուստը կամ ուստիկանության ծառայողներին և հասարակության ներկայացուցիչների նկատմամբ հնարավոր բռնության գործադրումը: Այնինչ, ազատությունից զրկված անձինք գտնվում են իրավապահ մարմինների վերահսկողության ներքո՝ լրացուցիչ ներգործության կիրառումը դարձնելով ավելի մտահոգիչ և պահանջում են ներգործության միջոցների կիրառման ավելի խիստ չափանիշներ, պայմաններ և սահմաններ:

➤ **Առանձին տեսակի հատուկ միջոցներն (էլեկտրահարող սարք, արցունքաբեր գազ և այլն) ունեն փակ տարածքներում գործադրման առանձնահատկություններ,** ինչի կապակցությամբ անհրաժեշտ է որոշակի տեսակների առնչությամբ տարբերակված մոտեցում՝ բացառելով դրանց կիրառումը ձերբակալվածներին պահելու վայրերում կամ նախատեսել դրանց գործադրման առավել խիստ չափանիշներ:

Ուստի ուստիկանության ծառայողների կողմից ՁՊՎ-ում պահվող ազատությունից զրկված անձանց նկատմամբ ֆիզիկական ուժ, հատուկ միջոցների և զենքի կիրառման հատուկ իրավական ընթացակարգի առկայությունը թույլ կտա տվյալ մարմնում ուստիկանական ծառայությանը և ներքին կանոնակարգին բնորոշ առանձնահատկությունների հաշվառմամբ այն իրականացնել առավել արդյունավետ՝ թե՛ ծառայողների, և թե՛ ազատությունից զրկված անձանց իրավունքների և պարտականությունների համակողմանի ապահովմամբ:

Դրանց նախատեսումը հնարավորություն կտա նաև ուստիկանության ողջ սպառազինության լրակազմից առանձնացնելու և կիրառման համար նախատեսելու սահմանափակ թվով այն ներգործության միջոցները, որոնք կհամապատասխանեն ՁՊՎ-ների շենքային և կառուցվածքային պայմաններին, կապահովեն ծառայողների համապատասխան պատրաստվածության անցկացումը, հնարավոր կլինի կանխատեսել և կառավարել փակ շենքային պայմաններում դրանց կիրառության անվտանգային ռիսկերը, իրականացնել գործադրման դեպքերի համապարփակ ուսումնասիրություններ և այլն:

Հարկ է նկատել նաև, որ, ինչպես ՁՊՎ-ներում, ՔԿՀ-ներում նույնպես, ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և հրազենի կիրառման վերաբերյալ հատուկ մեթոդաբանությամբ մշակված գործնական ուղեցույցներ առկա չեն:

Ուստի, ներգործության ուժային միջոցների կիրառումը կանոնակարգող ամբողջական և արդյունավետ նորմատիվ իրավական ակտերի բացակայությունը, ոչ միօրինակ կամ լարված իրավիճակներում կողմնորոշվելու, իրավաչափ գործելու նպատակով հատուկ մեթոդաբանությամբ մշակված գործնական ուղեցույցների բացակայությունը կարող են հանգեցնել ներգործության ուժային միջոցների կիրառման դեպքերի ոչ իրավաչափ դրսևորումների, որն էլ իր հերթին՝ վատ վերաբերմունքի տարաբնույթ դրսևորումների:

Ավելին, ներգործության ուժային միջոցների կիրառման վերաբերյալ հստակ և թիրախային մշակված քաղաքականության բացակայությունը անխուսափելիորեն կհանգեցնի նաև գործընթացի իրավաչափության գնահատման օբյեկտիվ դժվարությունների:

1.2. Քրեակատարողական հիմնարկներում և ձերբակալվածներին պահելու վայրերում ազատությունից զրկված անձանց նկատմամբ ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի կիրառման իրավաչափության պայմանները և սահմանները.

Ազատությունից զրկված անձանց նկատմամբ ներգործության միջոցների գործադրման իրավաչափության հուսալի երաշխիք է դրանց կիրառման օրենսդրությամբ սահմանված պայմանների պահպանումն ու սահմանների չվերազանցումը:

Եվրոպական բանտային կանոնների 64.1-րդ կետը ինչպես սահմանում է քրեակատարողական հիմնարկում ներգործության միջոցների կիրառման հիմքերը, այնպես էլ նախատեսում է, որ ազատությունից զրկված անձի նկատմամբ ներգործության միջոցի գործադրումը ցանկացած պարագայում պետք է լինի որպես վերջին միջոց:

ԵԲԿ 64.2-րդ կետում նշվում է, որ գործադրվող ուժի չափը պետք է լինի այն նվազագույնը, որն անհրաժեշտ է, ընդ որում, այն պետք է գործադրվի անհրաժեշտ ամենակարճ ժամանակով:

Ավելին, ԵԲԿ 68.3-րդ և 68.4-րդ կետերում նախատեսված է նաև, որ զսպման գործիքների կիրառությունը չպետք է խիստ անհրաժեշտության ժամանակահատվածից ավելի երկար տևի, իսկ դրանց կիրառության կարգը նախատեսվի ազգային օրենսդրությամբ:

Նշվածի կապակցությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հայտնել է իրավական դիրքորոշում առ այն, որ Դատարանը ընդունում է, որ ժամանակ առ ժամանակ ուժի կիրառումը կարող է անհրաժեշտ լինել բանտի անվտանգությունն ապահովելու և կալանավայրերում կարգուկանոն պահպանելու կամ հանցագործությունը կանխելու համար: Այնուամենայնիվ, նման ուժը կարող է կիրառվել միայն այն դեպքում, եթե դա ծայրահեղ միջոց է և չպետք է լինի

անհրաժեշտ չափից ավելի (*Tali v. Estonia*, 2014, § 59): Ըստ այդմ՝ Դատարանն արձանագրել է, որ ազատությունից զրկված անձի նկատմամբ՝ ֆիզիկական ուժի ցանկացած կիրառում, որը խստորեն անհրաժեշտ չի եղել նրա վարքագծի պարճառով, ստորացնում է մարդու արժանապատվությունը և հանդիսանում է Կոնվենցիայի 3-րդ հոդվածում ամրագրված իրավունքի խախտում (Արտյոմովն ընդդեմ Ռուսաստանի, 2010թ., § 145; *Bouyid v. Belgium [GC]*, 2015, § 101):

Այս առնչությամբ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանն³ Իվան Վասիլեվն ընդդեմ Բուլղարիայի վերաբերյալ վճռով սահմանել է, որ կարող է անհրաժեշտ լինել ուժ կիրառել բանտային պայմաններում, սակայն այն չպետք է չափազանցված լինի և կարող է կիրառվել միայն այն դեպքում, եթե դա անփոխարինելի է⁴:

Ավելին, ծառայողները պետք է դրական հարաբերություններ հաստատեն բանտարկյալների հետ և լավ ճանաչեն նրանց, քանի որ դա օգնում է նրանց կանխատեսել և արդյունավետ արձագանքել բանտում անվտանգային միջադեպերին⁵:

Նշվածի կապակցությամբ ԽԿԿ-ն Ալբանիա կատարած այցի վերաբերյալ 2014 թվականի զեկույցում արձանագրել է, որ ծառայողները երբեմն, ստիպված են լինելու ուժ կիրառել բռնի և (կամ) անհնազանդ ազատությունից զրկված անձանց վերահսկելու համար: Այնուամենայնիվ, կիրառվող ուժը չպետք է լինի ավելին, քան խիստ անհրաժեշտ է, և երբ հիշյալ անձինք արդեն իսկ հսկողության տակ են գտնվում, նրանց նկատմամբ ուժ կիրառելու համար որևէ արդարացում չի կարող լինել: ԽԿԿ-ն խորհուրդ է տվել նաև այդ նպատակով հստակ ուղերձ փոխանցել ազատությունից զրկված վայրերի կենտրոնական վարչակազմի հատուկ միջամտության ստորաբաժանման բոլոր անդամներին⁶:

Համաձայն «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի՝ քրեակատարողական ծառայողը, սույն օրենքի 48-50-րդ հոդվածներով նախատեսված դեպքերում և կարգով, իրավունք ունի գործադրելու ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և զենք, **եթե այլ միջոցները չեն ապահովում նրա վրա դրված պարտականությունների կատարումը**: Նույն հոդվածի 2-րդ մասը

³ Այսուհետ՝ Եվրոպական դատարան:

⁴ Տե՛ս Իվան Վասիլեվն ընդդեմ Բուլղարիայի գործով Եվրոպական դատարանի 2007 թվականի ապրիլի 12-ի վճիռը, գանգատ թիվ 48130/99, կետ 63, հասանելի է <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-80077> հղումով:

⁵ Տե՛ս ՄԱԿ-ի՝ թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի՝ «Ձեռնարկ բանտային ղեկավարների համար. Հիմնական վերապատրաստման գործիք և ուսումնական ծրագիր բանտի ղեկավարների համար՝ հիմնված միջազգային չափանիշների և նորմերի վրա», հասանելի է՝ https://www.unodc.org/documents/justice-and-prison-reform/UNODC_Handbook_for_Prison_Leaders.pdf կայքէջում՝ 15.10.2024թ.-ի դրությամբ, էջ 106-րդ:

⁶ Տե՛ս

<https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=09000016806677b7> կայքէջում, կետ 44:

ամրագրում է, որ. ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և զենք գործադրելիս քրեակադրողական ծառայողը պարտավոր է՝

1) նախազգուշացնել դրանք գործադրելու մտադրության մասին՝ անձին բավարար ժամանակ տրամադրելով իր պահանջների կատարման համար, բացառությամբ այն դեպքերի, երբ հապաղումն անմիջական վրանգ է ստեղծում քրեակադրողական ծառայողի կյանքի կամ առողջության համար, կամ երբ ստեղծված իրադրությունում նման նախազգուշացումն անհնար է.

2) դրանք գործադրել իրավախախտման կամ դիմադրության վրանգավորության բնույթին և աստիճանին համաչափ.

3) մարմնական վնասվածքներ ստացած անձանց ցույց տալ առաջին օգնություն:

Համաձայն «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի՝ Ոստիկանության ծառայողը որպես բացառիկ միջոց գործադրում է ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և հրազեն՝ սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով, այնքանով, որքանով դա անհրաժեշտ է իր պարտականությունները կատարելու համար, **եթե այլ միջոցներով այդ պարտականությունների կատարումը հնարավոր չէ ապահովել:**

Ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և հրազենի գործադրման ընտրությունը կատարելիս ոստիկանության ծառայողն առաջնորդվում է՝ **ելնելով ստեղծված իրավիճակից, իրավախախտման բնույթից ու իրավախախտի անձից:**

Ոստիկանության ծառայողը ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և հրազեն գործադրելուց առաջ պարտավոր է նախազգուշացնել դրանք գործադրելու մասին՝ բավարար ժամանակ տրամադրելով օրինական պահանջները կատարելու և իրավախախտումը դադարեցնելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանց գործադրման հապաղումն անմիջական սպառնալիք է ստեղծում քաղաքացիների կամ ոստիկանության ծառայողի կյանքի ու առողջության համար կամ կարող է առաջացնել այլ ծանր հետևանքներ, կամ երբ ստեղծված իրավիճակում այդպիսի նախազգուշացումն անհնար է:

Ոստիկանության ծառայողը պարտավոր է նաև ձգտել, որ իրավախախտին պատճառվող վնասը հասցվի նվազագույնի:

Ազատությունից զրկման վայրերում ազատությունից զրկված անձանց նկատմամբ ներգործության միջոցի կիրառման կապակցությամբ միջազգային իրավական ակտերը և ներպետական օրենսդրությունը նախատեսում են երկու խումբ իրավական պահանջներ և երաշխիքներ:

Առաջինը վերաբերում է ծառայողների կողմից ազատությունից զրկված անձի կատարած իրավախախտման բնույթի և վտանգավորության ճիշտ գնահատմանը և անհրաժեշտ ու անխուսափելի ներգործության միջոցի ընտրությանն ու կիրառմանը՝ ապահովելով, որ իրավախախտին պատճառվող վնասը հասցվի նվազագույնի:

Նշվածը կարևոր է այն համատեքստում, որ ներգործության միջոցի անհամաչափ գործադրումը կարող է հանգեցնել անմարդկային, դաժան կամ նվաստացնող վերաբերմունքի մինչև իսկ խոշտանգման՝ ունենալով ծանր հետևանքներ:

Իրավական պահանջների երկրորդ խումբը ուղղված է անմիջականորեն ազատությունից զրկված անձանց նկատմամբ ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի գործադրման իրավիճակում ծառայողների գործողություններին:

Այսպես, հաշվի առնելով ներգործության միջոցների գործադրման՝ որպես անվտանգային ռեժիմի կայունացման վերջին հնարավորությունը, առաջին հերթին ծառայողները պետք է օգտագործեն անվտանգության ապահովման դինամիկ (բանակցությունների վարում, խոսքի միջոցով լարվածության թոթափում, համոզում և այլն) միջոցներ՝ բարձր ռիսկային իրավիճակները դեֆսկալացնելու համար: Միաժամանակ, ծառայողները պարտավոր են նախազգուշացնել ազատությունից զրկված անձին ֆիզիկական ուժ, հատուկ միջոցների կամ զենք գործադրելու նպատակի մասին՝ բավարար ժամանակ տրամադրելով անձին օրինական պահանջները կատարելու և իրավախախտումը դադարեցնելու համար:

Այսպիսով, ներգործության միջոցների գործադրումը մշտապես պետք է դիտարկել որպես լարված իրավիճակի հանգուցալուծման վերջին միջոց և գործադրել իրավաչափ նպատակին հասնելու համար պահանջվող միջոցներից՝ մարդու կյանքի և առողջության համար նվազ ռիսկայնություն ունեցող տեսակը:

Անհրաժեշտ է հատուկ ընդգծել այն հանգամանքը, որ ներգործության համապատասխան միջոցների կիրառման ոչ իրավաչափ դրսևորումներն էական վնաս են հասցնում թե՛ անազատության մեջ գտնվող անձանց, թե՛ ծառայողներին, և թե՛ իրավասու մարմինների հեղինակությանը:

Ուստի, կարևոր է նկատի ունենալ, որ ՔԿՀ-ները և ՁՊՎ-ները, անվտանգային ռեժիմի տեսանկյունից, որքան էլ հանդիսանան բարձր ռիսկայնություն ունեցող մարմիններ, որոնցում հնարավոր են տարատեսակ միջադեպեր, այնուամենայնիվ, դրանց հակազդման և ռիսկայնության կառավարման համար պետք է ստեղծել և կատարելագործել այնպիսի համալիր գործիքակազմ, որը հնարավորություն կտա համաչափ կերպով գործադրել անհրաժեշտ ներգործությունը՝ առանց անձի հիմնարար իրավունքների ոտնահարման:

2. Ներգործության ուժային միջոցների գործադրման փաստաթղթավորումը և վերահսկողությունը.

Ներգործության միջոցների գործադրման նկատմամբ վերահսկողությունը և փաստաթղթավորումը կարևոր պայման են հանդիսանում ծառայողների կողմից հնարավոր չարաշահումների կանխարգելման, ինչպես նաև դեպքի հանգամանքների ամբողջական և պաշտոնական արձանագրման, արդյունավետ քննության համար:

Առանց հիշյալ գործընթացների ապահովման՝ ներգործության ուժային միջոցների գործադրման նկատմամբ հնարավոր չէ ապահովել պատշաճ վերահսկողություն, ինչն էլ իր հերթին կարող է հանգեցնել դրանց անհարկի կամ ոչ համաչափ տարաբնույթ դրսևորումների:

Մի շարք միջազգային փաստաթղթեր ամրագրում են ներգործության միջոցների գործադրման նկատմամբ պատշաճ վերահսկողության պարտադիր պայմաններ, ինչը ենթադրում է հիշյալ միջոցների գործադրման ցանկացած միջադեպի պատշաճ արձանագրում, փաստաթղթավորում և զեկուցման հստակ ընթացակարգերի առկայություն:

«Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածն ամրագրում է, որ «(...) *Ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ, հրազեն գործադրելու (օգտագործելու) հետևանքով վիրավորվածների կամ մահվան բոլոր դեպքերի, ինչպես նաև հատուկ միջոցներ և հրազեն գործադրելու (օգտագործելուն յուրաքանչյուր դեպքի մասին անհապաղ պետք է զեկուցել վերադասության կարգով, որը կատարվում է գրավոր (այսինքն՝ զեկուցագրով)՝ նշելով ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների, հրազենի գործադրման անհրաժեշտությունը փաստող հանգամանքները և իրավական հիմքերը, այն անձանց շրջանակը, որոնց նկատմամբ գործադրվել են դրանք, գործադրված հատուկ միջոցների, հրազենի և ռազմամթերքի տեսակը և քանակը, մարմնական վնասվածքներ ստացած անձանց առաջին բուժօգնությանն ուղղված միջոցառումները, մարմնական վնասվածքներ ստացած անձանց կամ մահացածներին տեղափոխելու վայրերը, եթե տեղափոխումն իրականացրել են ոստիկանության ծառայողները (...)*»:

Քրեակատարողական ծառայողների կողմից ֆիզիկական ուժ, հատուկ միջոց կամ զենք գործադրելու վավերապայմանները և կանոնակարգումները սահմանված են «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 47-ից 51-րդ հոդվածներով, Արդարադատության նախարարի 2011 թվականի նոյեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության անվտանգության ապահովման կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության կարգը հաստատելու մասին» N 194-Ն և Արդարադատության նախարարի 2011 թվականի նոյեմբերի 21-ի «Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության պահպանության ապահովման կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության կարգը հաստատելու մասին» N 195-Ն հրամաններով:

Հատկանշական է, որ վերոնշյալ երկու հրամանների համապատասխանաբար 120-րդ և 137-րդ կետերը սահմանում են կիրառված ներգործության միջոցների զեկուցման կարգը, մասնավորապես, *կալանավորված անձի կամ դատապարտյալի նկատմամբ ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների կամ զենքի գործադրման դեպքում համապատասխան ծառայողի կողմից կազմվում է դրա վերաբերյալ*

արձանագրություն, որին կցվում է անձի մարմնի զննման արդյունքների վերաբերյալ բժշկական փեղեկանք, արդյունքում՝ արձանագրությունը զեկուցագրով ներկայացվում է Հիմնարկի պեփին:

Հիշյալ իրավանորմի բովանդակային վերլուծության արդյունքներով պարզ է դառնում, որ թեև քրեակատարողական ծառայողների համար օրենսդրությամբ ամրագրված է ներգործության միջոցների գործադրման արդյունքում զեկուցագրի կազմման և դրանք վերադասության կարգով ներկայացնելու ուղղակի պահանջ, այնուամենայնիվ, դրանք չեն նախատեսում ներգործության միջոցներից յուրաքանչյուր տեսակի վերաբերյալ կազմվելիք արձանագրության ձևերը և լրացման ենթակա թիրախային հարցադրումները:

Այսպիսով, քրեակատարողական և ոստիկանության ծառայողների կողմից ազատությունից զրկված անձանց նկատմամբ ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի գործադրման վերաբերյալ կազմվող զեկուցագրերի հաստատված ձևեր՝ ներգործության կոնկրետ տեսակով պայմանավորված առանձնահատկությունների հաշվառմամբ, առկա չեն, ինչը թույլ կտար տվյալ մարմնում իրականացվող ծառայության, ինչպես նաև ծառայողների լրակազմում գտնվող հատուկ միջոցների և սպառազինության առանձնահատկությունների հաշվառմամբ օբյեկտիվ և ամբողջական պատկերացում կազմել տեղի ունեցած դեպքերի վերաբերյալ: Օրինակ, էլեկտրահարող սարքերի գործադրման դեպքերի արձանագրման նպատակով համապատասխան զեկուցագրի ներդրման պայմաններում հնարավոր կլիներ տեղեկատվության առաջնային աղբյուրից ստանալ կարևոր և կոնկրետ տվյալներ՝ կիրառման դեպքերի քանակի, պարպման լիցքի ուժգնության, ներգործության ենթարկված անձի մարմնի տեղադիրքի, հեռավորության, նախնական վիճակի, հետևանքների, անձին պատճառված առողջական վնասի և այլ կարևոր նշանակություն ունեցող հարցերի վերաբերյալ, որոնք, անկասկած, էական ազդեցություն կունենան դեպքի հանգամանքների ամբողջական վերհանման և վերահսկման համար:

Ներգործության ուժային միջոցի կիրառման վերաբերյալ արձանագրության ձևերի և լրացման ենթակա թիրախային հարցադրումների բացակայությունը խնդրահարույց է դեպքի բոլոր հանգամանքների փաստագրման և հետագա պատշաճ իրավական գնահատականի ապահովման տեսանկյունից:

Ներգործության ուժային միջոցի՝ կիրառման օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերի առավել արդյունավետ գործադրման, հնարավոր փակուղային և ռիսկայնության բարձր աստիճան ունեցող իրավիճակներում իրավաչափ գործողությունների դիմելու, ինչպես նաև գործադրված ներգործության միջոցների մանրակրկիտ և թիրախային հարցադրումներ պարունակող տիպային զեկուցագրերի նախատեսման պայմաններում առավել արդյունավետ կառուցակարգեր կստեղծվեն ծառայողների իրավաչափ գործողությունների պլանավորման և համապարփակ փաստագրման համար:

Այս համատեքստում կարևոր է անդրադառնալ քրեակատարողական հիմնարկներում և ձերբակալվածներին պահելու վայրերում ազատությունից զրկված անձանց նկատմամբ ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի կիրառումից հետո ծառայողների կողմից զեկուցագրերի կազմման առնչությամբ իրավակիրառ պրակտիկայում առկա խնդիրներին:

Ներգործության միջոցների գործադրումից հետո զեկուցագրերի պատշաճ կազմումը թույլ է տալիս առաջնային և հավաքական պատկերացում կազմել տեղի ունեցած դեպքի հանգամանքների վերաբերյալ և նախաձեռնել հետագա անհրաժեշտ գործընթացների կազմակերպումը (բժշկական օգնության և սպասարկման կազմակերպում, վերադաս դեկավարությանը իրազեկում, հնարավոր քննությունների նախաձեռնում և այլն):

Մարդու իրավունքների պաշտպանը՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմ, վերջին տարիներին ներկայացված տարեկան զեկույցներում անդրադարձել է հիշյալ խնդրին և դրանց լուծման հնարավոր եղանակներին⁷:

Վերջին տարիներին քրեակատարողական հիմնարկներում գործադրված միջոցների վերաբերյալ կազմված զեկուցագրերի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ դրանք տիպային են, դրանցում հաճախ կիրառվում են նույնաբովանդակ ձևակերպումներ և, միևնույն ժամանակ, խիստ գնահատողական ու չբացահայտված արտահայտություններ:

Մասնավորապես, զեկուցագրերում տեղ են գտնում այնպիսի արտահայտություններ, ինչպիսիք են՝ «ցուցաբերել է անհնազանդություն», «դրսևորել է ագրեսիվ և լկտի պահվածք», «տրվել է անհասցե հայիոյանքներ», «զազրախոսել է», «բերել է անօրինական պատճառաբանություններ», «չի ենթարկվել օրինական պահանջներին», «խոչընդոտել է խուզարկությանը», «բացատրվել է գործողությունների անթույլատրելիությունը», «տրվել է բավարար ժամանակ գործողությունները դադարեցնելու համար», «համապատասխան հետևություններ չի կատարել», «կիրառվել է համաչափ ուժ», «կիրառվել են սպորտային (մարտական, ձեռնամարտի) հնարքներ» և այլն:

Նման արտահայտությունները խիստ անորոշ են, և անհայտ է մնում, թե կոնկրետ ինչ հանգամանքներ են հիմք հանդիսացել հատուկ միջոցների կամ

⁷ Տես Մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեության վերաբերյալ 2020 թվականի տարեկան զեկույցը՝ <https://ombuds.am/images/files/11f00f3e87d3490e4e8c56f207e4bc85.pdf> կայքէջում, 2021 թվականի տարեկան զեկույցը <https://ombuds.am/images/files/3167e2e8e2e90d939c4cffd7c644593f.pdf> <https://ombuds.am/images/files/3167e2e8e2e90d939c4cffd7c644593f.pdf> կայքէջում, 2022 թվականի զեկույցը՝ <https://ombuds.am/images/files/b72b1f9421d6604ff9b21ae994634e00.pdf> կայքէջում, 2023 թվականի զեկույցը՝ <https://ombuds.am/images/files/f2d123ac0dc6555cfe8ab070a5977e5c.pdf> կայքէջում:

Ֆիզիկական ուժի կիրառման համար և ինչ տեսակի գործողություններ են իրականացվել: Դրանցից որևէ կերպ հնարավոր չէ հասկանալ, թե, օրինակ, ձեռնամարտի կոնկրետ ինչ հնարք է կիրառվել ազատությունից զրկված անձի նկատմամբ, որքանով է այն նկարագրված իրավիճակում եղել համաչափ, քանի որ պե կամ վայրկյան է գնահատվում «բավարար ժամանակը», ինչպիսի խոսքեր և արտահայտություններ է ընդգրկում «զազրախոսել» եզրույթը և այսպես շարունակ:

Նույն կերպ բացակայում է նաև կիրառված ուժի պատշաճ նկարագրությունը, և *«կիրառվել են սպորտային (մարտական, ձեռնամարտի) հնարքներ»* արտահայտությունները չեն կարող բավարարել որոշակիության պահանջին:

Նշված հանգամանքներն ակնհայտորեն վկայում են այն մասին, որ քրեակատարողական ծառայողները պատշաճ վերապատրաստված չեն ուժի գործադրման մասին հանգամանալից զեկուցելու չափանիշների վերաբերյալ:

Ուստի անհրաժեշտ է միջազգային և ներպետական իրավական ակտերի պահանջների պահպանմամբ՝ ուժի, հատուկ միջոցների կամ զենքի գործադրման յուրաքանչյուր դեպքից հետո դրան մասնակցող բոլոր ծառայողների և վերադասների կողմից կազմել հանգամանալից զեկուցագիր: Նշվածը գլխավորապես կարևորվում է ազատությունից զրկված անձանց նկատմամբ ենթադրյալ անհամաչափ ֆիզիկական ներգործության կապակցությամբ նախաձեռնված քրեական վարույթի շրջանակներում վերջիններիս կողմից կատարված իրավախախտման բնույթի և դրա վտանգավորության, ինչպես նաև այդ կապակցությամբ քրեակատարողական կամ ոստիկանության ծառայողների կողմից կիրառված ներգործության միջոցի անհրաժեշտությունը և տվյալ իրավիճակում ընտրված միջոցների համաչափությունը գնահատելիս:

3. ՔԿՀ և ՁՊՎ ծառայողների մասնագիտական պատրաստվածության ապահովումը և կարողությունների շարունակական կատարելագործումը.

Ազատությունից զրկման վայրերում առանցքային նշանակություն ունի ծառայողների մասնագիտական ունակությունների, մասնավորապես՝ ներգործության միջոցների գործադրման մասով կարողությունների շարունակական կատարելագործումը:

Կարևոր է ընդգծել, որ հենց քրեակատարողական ծառայողի և ոստիկանի հմուտ պատրաստվածությունն է վերջիններիս ծառայողական պարտականությունների պատշաճ կատարման նախապայմանը:

Այս կապակցությամբ Եվրոպական բանտային կանոնների 66-րդ կետով սահմանվում է, որ *ազատությունից զրկված անձանց հետ ուղղակիորեն գործ ունեցող աշխատակիցները պետք է վերապատրաստվեն այն հնարքների գծով, որոնք նրանց թույլ կտան ազդեցիկ անձանց զսպելու նպատակով նվազագույն ուժ գործադրել:*

Հիշյալ կանոնի լիարժեք իրացումը բխում է թե՛ ՔԿՀ-ներում, և թե՛ ՁՊՎ-ներում ծառայողների կողմից իրականացվող գործողությունների իրավաչափության ապահովման առաջնահերթությունից: Այն իր կարևորությունը ստացել է նաև ԽԿԿ-ի կողմից՝ անդամ պետություններում իրականացված այցերի վերաբերյալ զեկույցներում:

Մասնավորապես, ԽԿԿ-ն 2007 թվականի Բոսնիա և Հերցեգովինա կատարած այցի վերաբերյալ զեկույցում արձանագրել է, որ *վաղ վերաբերմունքի դեմ լավագույն երաշխիքներից մեկը պատշաճ կերպով ներգրաված և պատրաստված բանտային ծառայողն է, որը գիտի, թե ինչպես համապատասխան վերաբերմունք որդեգրել ազատությունից զրկված անձանց հետ իր հարաբերություններում*⁸:

ԽԿԿ-ի՝ 2010 թվականին Ալբանիա կատարած այցի վերաբերյալ զեկույցում նշվել է, որ *բանտի անձնակազմի վերապատրաստման ընթացքում առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել միջանձնային հաղորդակցման հմտությունների ձեռքբերմանը և զարգացմանը, ինչպես նաև խնդրահարույց իրավիճակների լուծմանը՝ առանց ավելորդ ուժի կիրառման*⁹:

Հարկ է նշել, որ հատուկ միջոցներ կրելու և գործադրելու մասով քրեակատարողական ծառայողները մասնագիտական ուսուցում և վերապատրաստում անցնում են ՀՀ փոխվարչապետի 2020 թվականի օգոստոսի 6-ի «Քրեակատարողական ծառայության հանրային ծառայողների հրազեն և օրենքով նախատեսված հատուկ միջոցներ կրելու, պահելու և գործադրելու (կիրառելու) նպատակով հատուկ ուսուցում անցնելու կարգն ու պայմանները սահմանելու մասին» N 477-Լ որոշման շրջանակներում, որի 6-րդ կետի համաձայն՝ *քրեակատարողական ծառայության հանրային ծառայողները ենթակա են պարտադիր հատուկ ուսուցման ոչ ուշ, քան երեք տարին մեկ անգամ: Հատուկ ուսուցում անցնելուց հետո ծառայողը կրկին կարող է հատուկ ուսուցում անցնել առնվազն 20 ամիս հետո*:

ԱՆ կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ քրեակատարողական ծառայողները յուրաքանչյուր տարի անցնում են ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի գործադրման վերաբերյալ մասնագիտական կարողությունների զարգացման, այդ թվում՝ մարմնական վնասվածքներ ստացած անձանց առաջին օգնություն ցուցաբերելու կապակցությամբ դասընթացներ, որոնք իրականացվում են «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:

ՀՀ ՆԳՆ-ից ստացված տեղեկությունների համաձայն՝ ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 23-ի «Ոստիկանության ծառայողի վերապատրաստում անցնելու կարգը և պայմանները հաստատելու մասին» N 174-Ն որոշման և ՀՀ ոստիկանության պետի 2015 թվականի դեկտեմբերի 3-ի N 2929-Ա հրամանի համաձայն

⁸ Տե՛ս <https://rm.coe.int/1680a0a521> կայքէջում, էջ 36:

⁹ Տե՛ս <https://rm.coe.int/1680667783> կայքէջում, էջ 46:

իրականացվող ծառայողական պարապմունքների ընթացքում ՁՊՎ ծառայողներն ուսումնասիրում են մարմնական վնասվածքներ ստացած անձանց առաջին բժշկական օգնություն ցուցաբերելու ձևերը և մեթոդները:

Ըստ ՀՀ ՆԳՆ տրամադրած տեղեկությունների՝ ՁՊՎ-ներում ծառայություն իրականացնող ոստիկանները ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի գործադրման վերաբերյալ մասնագիտական կարողությունների զարգացման հատուկ ուսուցում չեն անցնում:

Այնինչ, «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածը սահմանում է, որ *ոստիկանության ծառայողները պարտավոր են (...) պարբերաբար անցնել ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և հրազենի գործադրման անհրաժեշտություն առաջացնող իրադրություններում գործելու ունակությունը որոշող ստուգումներ: Համապատասխան պատրաստականություն անցնելուց հետո ոստիկանության ծառայողն իրավունք ունի պահելու և կրելու հրազեն ու հատուկ միջոցներ:*

Հարկ է հատուկ ընդգծել, որ ԵԲԿ 69.3-րդ կետը հստակ նախատեսում է, որ *ազատությունից զրկման վայրերի աշխատակիցներին չպետք է տրամադրվի զենք, եթե նրանք այդ զենքի օգտագործման վերապատրաստում չեն անցել:*

Այսպիսով, միջազգային և ներպետական իրավական ակտերի պահանջների համաձայն՝ քրեակատարողական և ոստիկանության ծառայողների կողմից հատուկ միջոցների և զենքի կրումն ու գործադրումը իրավաչափ է բացառապես ծառայողի՝ զենքի պահման և գործադրման վերաբերյալ հատուկ ուսուցում անցնելու պարագայում:

ՁՊՎ ծառայողների՝ որպես ազատությունից զրկված անձանց հետ անմիջական շփում ունեցող աշխատակիցների համար ֆիզիկական ուժի, զենքի և օրենքով նախատեսված հատուկ միջոցներ կրելու, պահելու և գործադրելու նպատակով հատուկ ուսուցման ծրագրերի և հատուկ իրադրություններում ներգործության միջոցների կիրառման պատրաստականության ծառայողական ստուգումների բացակայությունը խնդրահարույց է վերջիններիս ծառայողական պարտականությունների պատշաճ կատարման տեսանկյունից, որն իր հերթին բարձրացնում է ազատությունից զրկված անձանց նկատմամբ վատ վերաբերմունքի դրսևորման ռիսկը:

Ծառայողների մասնագիտական պատրաստվածության ապահովման շարքում կարևոր է նաև խոսքի միջոցով լարվածության թոթափման հմտությունների կատարելագործումը, քանի որ հաղորդակցական նման մեթոդները իրապես կարող են հանդես գալ որպես հակաիրավական վարքագիծ ցուցաբերող անձանց զսպման, իրավախախտումների կանխարգելման և այդպիսով ներգործության միջոցների հնարավոր գործադրումը բացառող հանգամանք:

Այնուամենայնիվ, ԱՆ կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ քրեակատարողական ծառայողների հատուկ ուսուցման առարկայական ծրագրում ներառված չեն ծառայողների՝ հակաիրավական վարքագիծ ցուցաբերող անձանց

հետ բանակցելու և խոսքի միջոցով լարվածության թոթափման հմտությունների կատարելագործմանն ուղղված դասընթացներ:

Ըստ ՀՀ ՆԳՆ-ից ստացված տեղեկությունների՝ ոստիկանության ծառայողները նույնպես չեն անցնում նշված բովանդակությամբ մասնագիտական ծրագրեր և վերապատրաստումներ, այնինչ, «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածը նախատեսում է ոստիկանության ծառայողները պարտականությունը անցնել հատուկ պատրաստություն, որի շրջանակներում սովորում են բանակցություններ վարելու և համոզելու հմտություններ՝ ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և հրագեների գործադրումը սահմանափակելու նպատակով:

Այսպիսով, կարևոր է նկատի ունենալ, որ ՔԿՀ և ՁՊՎ ծառայողների մասնագիտական կարողությունների զարգացումն ու շարունակական կատարելագործումը ենթադրում է ոչ միայն ֆիզիկական, այլև հատուկ միջոցների և զենքի գործադրման հմտությունների շարունակական լավարկում:

Համապատասխան պատրաստվածություն չունեցող ծառայողի կողմից ներգործության տարատեսակ միջոցների կիրառման կանոնների սահմանազանցմամբ գործադրումը կարող է վտանգել ազատությունից զրկված անձանց կյանքն ու առողջությունը:

Վերոհիշյալ դիտարկումների հաշվառմամբ էլ կարևորվում է ՁՊՎ ծառայողների պարբերական վերապատրաստումների նշանակությունը՝ վերջիններիս մասնագիտական կարողությունների կատարելագործման և ծառայողական պարտականությունների պատշաճ կատարումը երաշխավորելու նպատակով:

Խիստ կարևոր է ՁՊՎ ծառայողների համար մանրակրկիտ մշակված հատուկ կրթական ծրագրերի ներդնումը, ֆիզիկական ուժի՝ առանձին հատուկ և մարդու կյանքին և առողջությանն առավել նվազ վտանգավորություն հասցնող վարժաձևերի ուսուցումը, ինչպես նաև մասնագիտական դասընթացների ու վերապատրաստումների պարբերական անցկացումը: Կարևոր է նաև ՔԿՀ ծառայողների մասնագիտական վերապատրաստումների ծրագրերում հակաիրավական վարքագիծ ցուցաբերող անձանց հետ բանակցելու և խոսքի միջոցով լարվածության թոթափմանն ուղղված հմտությունների կատարելագործման դասընթացների ներառումը:

4. Իրավապահ գործառույթներ իրականացնող պետական մարմինների ծառայողների հնարավոր ներգրավվածությունը ՔԿՀ-ներում և ՁՊՎ-ներում ներգործության ուժային միջոցների գործադրմանը.

ՔԿՀ-ներում և ՁՊՎ-ներում ներքին կանոնակարգի խմբային խախտումների, զանգվածային անկարգությունների կամ որևէ այլ մասշտաբային զարգացումների դեպքում հնարավոր է, որ բացի ՔԿՀ և ՁՊՎ ծառայողներից, անհրաժեշտություն առաջանա ներգրավել նաև իրավապահ գործառույթներ իրականացնող այլ իրավասու պետական մարմինների ծառայողների:

Այն, թերևս, կարևոր է ազատությունից զրկման վայրերում անվտանգային ռեժիմի վերականգման և անձանց կյանքի ու առողջության պաշտպանության տեսանկյուններից:

Իրավապահ գործառույթներ իրականացնող պետական մարմինների ծառայողներին ՔԿՀ-ներում և ՁՊՎ-ներում նմանաբնույթ գործընթացներում ներգրավվելու առնչությամբ ԵԲԿ 67.1-րդ կետում նշվում է, որ *իրավապահ այլ մարմինների աշխատակիցները պետք է բանտի ներսում ազատությունից զրկված անձանց նկատմամբ իրականացվող գործողությունների մեջ ներգրավվեն միայն բացառիկ դեպքերում:*

Հատկանշական է, որ նույն կանոնների 67.2-րդ և 67.3-րդ կետերով առաջադրվում են նաև լրացուցիչ պարտադիր պահանջներ, որոնց համաձայն՝ *քրեակատարողական մարմինների և նշված այլ իրավապահ մարմինների միջև պետք է լինի պաշտոնական պայմանագիր, բացառությամբ երբ նրանց հարաբերություններն արդեն կարգավորված են ներպետական օրենսդրությամբ: Այդ պայմանագրով պետք է նախատեսվեն.*

ա. այն դեպքերը, որոնցում իրավապահ այլ մարմինների ներկայացուցիչներն իրավասու են մուտք գործել բանտ առկա որևէ կոնֆլիկտի առնչությամբ,

բ. բանտում գտնվելու ընթացքում իրավապահ այլ մարմինների լիազորությունների շրջանակը և նրանց փոխհարաբերությունները բանտի ղեկավարի հետ,

գ. ուժի այն տեսակները, որոնք այդ մարմինների ներկայացուցիչներն իրավասու են գործադրել,

դ. այն հանգամանքները, որոնցում ուժի յուրաքանչյուր տեսակ կարող է գործադրվել,

ե. որևէ ուժ գործադրելու համար պահանջվող թույլտվության մակարդակը,

զ. ուժ գործադրելուց հետո լրացման ենթակա հաշվետվությունները:

Հարկ է նշել, որ ներպետական օրենսդրությամբ առկա չեն ՔԿՀ-ներում և ՁՊՎ-ներում իրավապահ գործառույթներ իրականացնող պետական մարմինների ծառայողներին ներգործության ուժային միջոցների գործադրմանը ներգրավելու կառավարչական իրավահարաբերությունները կանոնակարգող նորմատիվ իրավական ակտեր:

ԱՆ և ՆԳՆ տրամադրած տեղեկությունների համաձայն՝ իրավակիրառ պրակտիկայում ներքին կանոնակարգի խմբակային խախտումների, զանգվածային անկարգությունների կամ մասշտաբային այլ դեպքերում այլ պետական մարմինների ծառայողներ ներգործության միջոցների գործադրմանը չեն մասնակցել:

Թեև ողջունելի է, որ իրավապահ գործառույթներ իրականացնող պետական մարմինների ծառայողներին ՔԿՀ-ներում և ՁՊՎ-ներում իրականացվող գործողություններին ներգրավելու դեպքեր չեն արձանագրվել, այնուամենայնիվ, նման

դեպքերի համար կարևոր է օրենսդրությամբ սահմանված հստակ և կանխատեսելի երաշխիքների առկայությունը:

Ուստի, ՔԿՀ-ներում և ՁՊՎ-ներում անվտանգային ռեժիմի լիարժեք ապահովման տեսանկյունից կարևոր է քննարկման առարկա դարձնել իրավապահ գործառույթներ իրականացնող պետական մարմինների ծառայողներին ևս անվտանգային ռեժիմի պահպանման միջոցառումներին ներգրավելու իրավական կառուցակարգեր ներդնելու անհրաժեշտությունը:

5. ՔԿՀ և ՁՊՎ ծառայողների սպառազինության լրակազմում գտնվող միջոցները և դրանց գործադրման թույլատրելիության չափանիշները.

Ինչպես արդեն նշվել է սույն զեկույցի նախորդ բաժիններում ներգործության միջոցների գործադրումը մշտապես պետք է դիտարկել որպես լարված իրավիճակի հանգուցալուծման վերջին միջոց և գործադրել իրավաչափ նպատակին հասնելու համար պահանջվող միջոցներից՝ մարդու կյանքի և առողջության համար նվազ ռիսկայնություն ունեցող տեսակը:

Այսպես, քրեակատարողական ծառայողների կողմից ծառայողական պարտականությունների կատարման կապակցությամբ անհրաժեշտ զենքի, հատուկ և ինքնապաշտպանական միջոցների տեսակները սահմանված են ՀՀ կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 8-ի «Քրեակատարողական ծառայողի կողմից ծառայողական պարտականությունների կատարման կապակցությամբ քրեակատարողական ծառայությանն անհրաժեշտ զենքի, հատուկ և ինքնապաշտպանական միջոցների տեսակը, ձևը, մոդելը և քանակը սահմանելու մասին» N 1538-Ն որոշմամբ:

Ոստիկանության սպառազինության մեջ ընդգրկված միջոցները սահմանված են ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 23-ի «Հայաստանի Հանրապետության ոստիկանության սպառազինության մեջ ընդգրկված հրազենի և ռազմամթերքի տեսակների, հատուկ միջոցների և անհատական պաշտպանության միջոցների ցանկերը, ինչպես նաև դրանք սպառազինության մեջ ընդգրկելու, սպառազինությունից հանելու, հատուկ միջոցները և անհատական պաշտպանության միջոցները ոչնչացնելու կարգը հաստատելու մասին» N 867-Ն որոշմամբ:

Գործադրվող հատուկ միջոցների տեսակները և առաջադրվող չափանիշներն առանցքային նշանակություն ունեն, նախևառաջ, ազատությունից զրկված անձանց կյանքի և առողջության պահպանման իրավունքների երաշխավորման տեսանկյունից:

Հարկ է նշել, որ հատուկ միջոցների և հրազենի առանձին տեսակների առնչությամբ միջազգային իրավական ակտերը նախատեսում են գործադրման առավել խիստ չափանիշներ, իսկ որոշ տեսակների կիրառումը առհասարակ արգելվում է՝ հաշվի առնելով դրա ազդեցությունն անձի հոգեկան և ֆիզիկական անձեռնմխելիության վրա:

Նշվածի համատեքստում հարկ է անդրադառնալ օրենսդրությամբ սահմանված ներգործության այնպիսի միջոցների, որոնց գործադրումը (հատկապես՝ փակ տարածքներում) համարվում է չափազանց խնդրահարույց: Խոսքն առաջին հերթին վերաբերում է արցունքաբեր գազի կիրառությանը:

Կասկածից վեր է արցունքաբեր գազի բարձր վտանգավորությունը մարդու կյանքի և առողջության համար: Այն, ըստ էության, չի համապատասխանում նաև ԽԿԿ կողմից սահմանված կիրառելիության չափորոշիչներին:

Մասնավորապես, Ռումինիա կատարած այցի վերաբերյալ 2014 թվականի զեկույցում ԽԿԿ-ն արձանագրել է, որ *արցունքաբեր գազի օգտագործումը չպետք է լինեն հսկողություն իրականացնող անձնակազմի կարգավորիչ սարքավորումների մաս, և հաշվի առնելով այս նյութի պոտենցիալ վտանգավոր ազդեցությունները՝ սահմանափակ օգտագործումը արցունքաբեր գազի օգտագործումը պետք է խստիվ արգելվի*¹⁰:

Արցունքաբեր գազի օգտագործման հարցում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Տալլին ընդդեմ Էստոնիայի գործով արձանագրել է, որ *պղպեղի սփրեյը պոտենցիալ վտանգավոր նյութ է, որը չպետք է օգտագործվի սահմանափակ օգտագործում: Եթե այն բացառապես անհրաժեշտ էր օգտագործել բաց օդում, ապա պետք է լինեն հստակ սահմանված երաշխիքներ: Թեև պղպեղի սփրեյը քիմիական զենք չէ համարվում, և դրա օգտագործումը թույլատրված է իրավապահ մարմինների համար՝ այն կարող էր փոխարինել բացասական հետևանքներ ունենալ բանտարկյալի առողջության վրա*¹¹:

Ավելին, Ալի Գյունեշն ընդդեմ Թուրքիայի վերաբերյալ վճռում Եվրոպական դատարանը նշել է, որ *արցունքաբեր գազը երբեք չպետք է օգտագործվի անձի դեմ, որն արդեն հսկողության տակ է*¹²:

Ուստի, հաշվի առնելով, որ արցունքաբեր գազի՝ փակ տարածքներում օգտագործումը էական ռիսկեր է պարունակում անձանց կյանքի և առողջության համար՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը և ԽԿԿ-ն եզրահանգել են ծառայողների կողմից փակ տարածքներում արցունքաբեր գազի կիրառման անթույլատրելիության վերաբերյալ: Կարևոր է նաև արձանագրել, որ արցունքաբեր գազը երբեք չպետք է օգտագործվի այն անձի դեմ, որն արդեն իսկ հսկողության տակ է, քանի որ այդժամ բացակայում է ազատությունից զրկված անձի կողմից հակահրավակյալ արարք կատարելու ռիսկը:

Հարկ է արձանագրել, որ բաց տարածություններում և ՁՊՎ-ներում ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի կիրառման ընդհանուր կարգը նախատեսված է

¹⁰ Տե՛ս <https://rm.coe.int/1680697a4a> կայքէջում, կետ 110:

¹¹ Տե՛ս Տալլին ընդդեմ Էստոնիայի գործով Եվրոպական դատարանի վճիռ, թիվ 66393/10, 13.05.2014թ., հասանելի է՝ <https://hudoc.echr.coe.int/fre?i=001-140785> կայքէջում, կետ 78:

¹² Տե՛ս Ալի Գյունեշն ընդդեմ Թուրքիայի վերաբերյալ Եվրոպական դատարանի վճիռ, թիվ 9829/07, 10.07.2012թ., հասանելի է՝ <https://hudoc.echr.coe.int/fre?i=001-110262> կայքէջում, 39-40 կետեր:

«Ոստիկանության մասին» ՀՀ օրենքով, և ՁՊՎ-ներում կիրառման ենթակա հատուկ միջոցների տեսակների և գործադրման ընթացակարգերի կապակցությամբ հատուկ իրավական ակտեր առկա չեն: Ուստի, ոստիկանության ծառայողների կողմից նույն օրենքով նախատեսված հատուկ միջոցների կիրառման հիմքերի առկայության դեպքում ՁՊՎ-ներում իրավաչափ է կիրառել նաև արցունքաբեր գազը, ինչը ակնհայտորեն չի բխում ԽԿԿ-ի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումներից:

Նշվածի առնչությամբ ևս մեկ անգամ ընդգծվում է ՁՊՎ-ներում ոստիկանության ծառայողների կողմից ազատությունից զրկված անձանց նկատմամբ ներգործության միջոցների կիրառման առանձնահատուկ ընթացակարգ նախատեսելու անհրաժեշտությունը:

Անդրադառնալով նաև քրեակատարողական հիմնարկներում արցունքաբեր գազի կիրառմանը՝ հարկ է նշել, որ «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 3-րդ մասը նախատեսում է, որ *սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում որպես հատուկ միջոցներ կարող են կիրառվել ռեպրեսիվ մահակներ, ձեռնաշղթաներ և ոտնաշղթաներ, ուշադրությունը շեղող լուսաձայնային միջոցներ, արգելքներ քանդող միջոցներ, ջրանեղեր կամ զրահամեքենաներ, ծառայողական շներ, ինչպես նաև մարդու առողջությանը վնաս չպատճառող յուրաքանչյուր այլ միջոց:*

Միաժամանակ, ՀՀ կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 8-ի «Քրեակատարողական ծառայողի կողմից ծառայողական պարտականությունների կատարման կապակցությամբ քրեակատարողական ծառայությանն անհրաժեշտ զենքի, հատուկ և ինքնապաշտպանական միջոցների տեսակը, ձևը, մոդելը և քանակը սահմանելու մասին» N 1538-Ն որոշման հավելվածը հատուկ միջոցների շարքում նախատեսում է նաև այլ միջոցներ, մասնավորապես՝ արցունքաբեր գազը:

Վերոնշյալ իրավական նորմերի համադրությամբ կարելի է եզրահանգել, որ արցունքաբեր գազը կարող է կիրառվել որպես հատուկ միջոց՝ հաշվի առնելով, որ «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 3-րդ մասը չի նախատեսում հատուկ միջոցների սպառիչ ցանկ՝ ամրագրելով ծառայողների կողմից մարդու առողջությանը վնաս չպատճառող ցանկացած այլ միջոց կիրառելու իրավասությունը:

Հաշվի առնելով ներգործության միջոցի կիրառմամբ անձի հոգեկան և ֆիզիկական անձեռնմխելիության խախտման վտանգները և ծառայողների կողմից չարաշահումների իրական հնարավորությունը՝ անթույլատրելի է այնպիսի իրավակարգավորումների նախատեսումը, որոնք հնարավորություն են տալիս ծառայողներին, իրենց գիտելիքների սահմաններում, հայեցողություն դրսևորել ազատությունից զրկված անձանց նկատմամբ ներգործության, մասնավորապես՝ հատուկ միջոցի տեսակի ընտրության և գործադրման հարցում:

Միաժամանակ, հաշվի առնելով փակ տարածություններում արցունքաբեր գազի կիրառման անթույլատրելիության վերաբերյալ ՄԻԵԴ-ի և ԽԿԿ-ի իրավական դիրքորոշումները՝ անհրաժեշտ է օրենսդրական մակարդակում իրավական որոշակիության սկզբունքին համապատասխանող իրավակարգավորումներով նախատեսել այն հատուկ միջոցների հստակ շրջանակը, որոնք կարող են ծառայողների կողմից օգտագործվել որպես ներգործության միջոց՝ բացառելով ինչպես արցունքաբեր գազի գործադրման հնարավորությունը, այնպես էլ հատուկ միջոցների ընտրության հարցում ծառայողների հայեցողության դրսևորումը:

2020-2024 թվականների ընթացքում կանխարգելման ազգային մեխանիզմի կողմից քրեակատարողական հիմնարկներ կատարված մշտադիտարկման այցերի ընթացքում արձանագրվել է, որ դիտարկված ՔԿՀ-ներում պահվել են մեծաթիվ ատրոզոլ-սփրեյներ (արցունքաբեր գազ), որոնք պարունակել են ինչպես պղպեղի հանուկ (OC), այնպես էլ քլոր պարունակող մարտական քիմիական նյութ (CS): Ընդ որում, դիտարկված քրեակատարողական հիմնարկներում դրանք հիմնականում եղել են ժամկետանց:

Հարկ է նկատել, որ քրեակատարողական հիմնարկներում արցունքաբեր գազի հնարավոր կիրառումը՝ որպես հատուկ միջոց, ողջամիտ մտահոգություն է առաջացնում միջազգային և ներպետական իրավական ակտերի պահանջների ապահովման տեսանկյունից:

Ուստի անհրաժեշտ է բացառել քրեակատարողական հիմնարկներում որպես քաղաքացիական զենք և հատուկ միջոց արցունքաբեր գազի առկայությունն այն պարագայում, երբ խոշտանգումների և վատ վերաբերմունքի արգելքի համատեքստում արգելվում է փակ տարածքներում տվյալ հատուկ միջոցի կիրառումը:

Խոսելով կիրառվող զենքերի մասին՝ հարկ է անդրադառնալ նաև էլեկտրական (կայծային) պարպման սարքերին:

Այս կապակցությամբ ԽԿԿ-ն արձանագրել է նաև, որ *ոստիկանության ողջ անձնակազմի համար պետք է հստակեցնել, որ էլեկտրական լիցքաթափման զենքերը կարող են օգտագործվել միայն այն դեպքում, երբ կյանքին իրական և անմիջական վրանգ կամ լուրջ վնասվածքների վրանգ է սպառնում: Նման զենքին դիմելը միայն հրամանի կատարումն ապահովելու նպատակով անթույլատրելի է:*

ԽԿԿ 20-րդ ընդհանուր զեկույցում¹³ և սահմանվել է, որ *էլեկտրական լիցքաթափման զենքի օգտագործումը պետք է ենթարկվի անհրաժեշտության, օժանդակության, համաչափության, նախազգուշացման (հնարավորության դեպքում) սկզբունքներին: Ավելին, նման զենքին դիմելը պետք է թույլատրվի միայն այն դեպքում, երբ այլ ոչ այնքան հարկադրող մեթոդները (բանակցություններ և համոզում, ձեռքով հսկողության տեխնիկա և այլն) ձախողվել կամ անհրազոր ծել են,*

¹³ Տե՛ս ԽԿԿ-ի գործունեության վերաբերյալ 20-րդ ընդհանուր զեկույց, հասանելի է՝ <https://rm.coe.int/1680696a87> կայքէջում, կետ 69:

և երբ դա ավելի մեծ ռիսկ ներկայացնող մեթոդի կիրառման միակ հնարավոր այլընտրանքն է¹⁴:

ԽԿԿ-ի դիրքորոշումը նման միջոցների կիրառության վերաբերյալ կարող է ամփոփվել այսպես.

- «Էլեկտրական (կայծային) պարպման տարբեր տեսակի զենքերը կարող են սուր ցավ պատճառել և չարաշահվել: Դրանց կիրառության չափորոշիչները պետք է նախատեսվեն օրենքով և մանրամասնեցվեն ենթաօրենսդրական կարգավորումներում:

- Դրանք կիրառելիս պետք է պահպանել անհրաժեշտության, համաչափության, նախապես զգուշացնելու (երբ դա հնարավոր է) և զգուշավորության սկզբունքները:

- Այն պաշտոնատար անձինք, որոնց դրանք հատկացվում են, պետք է համարժեքորեն վերապատրաստվեն, որպեսզի կարողանան դրանք ճիշտ կիրառել:

- Եթե կիրառվում են էլեկտրական (կայծային) պարպման զենքեր, որոնք կարող են բեկորներ արձակել, կիրառելի չափորոշիչները պետք է համադրելի լինեն հրազենի գործադրման չափորոշիչներին:

- Դրանց կիրառությունը պետք է սահմանափակված լինի այն իրավիճակներով, որոնցում առկա է կյանքի համար իրական և վերահաս սպառնալիք կամ մարմնական ծանր վնասվածքի ռիսկ, և երբ նվազ հարկադրանք պարունակող մեթոդներն արդեն կիրառվել և արդյունք չեն տվել կամ դրանց կիրառությունը գործնականում հնարավոր չէ: Դրանք որևէ պարագայում չպետք է օգտագործվեն միմիայն հրամանի կատարումն ապահովելու նպատակով:

- Փակ տարածքներում, օրինակ՝ խցերում, դրանք կարող են կիրառվել միայն խիստ բացառիկ հանգամանքներում:

- Էլեկտրական (կայծային) պարպման միջոցները պետք է ապահովված լինեն համապատասխան սարքերով, օրինակ՝ հիշողության կրիչներով, որոնք կարող են արձանագրել տեղեկություններ, մասնավորապես՝ կիրառելու ստույգ ժամը, տևողությունը, լիցքի ուժգնությունը, ինչպես նաև պետք է ունենան տեսագրելու հնարավորություն:

- Յուրաքանչյուր ոք, որի նկատմամբ կիրառվել է էլեկտրական (կայծային) պարպման զենք, պետք է բոլոր դեպքերում զենվի բժշկի կողմից, իսկ եթե անհրաժեշտ է, ապա՝ հետազոտվի բժշկական հաստատությունում:

- Յուրաքանչյուր կիրառությունից հետո պետք է քննարկում կազմակերպել, ինչպես նաև միջադեպի վերաբերյալ մանրակրկիտ զեկույց կազմել:

Վրաստան կատարած այցի վերաբերյալ 2014 թվականի զեկույցում ԽԿԿ-ն շեշտել է, որ էլեկտրական (կայծային) պարպման սարքերի (էլեկտրաշոկ) օգտագործումը կարող է հիմնավորված լինել խիստ ծայրահեղ դեպքերում, երբ բոլոր այլ միջոցներն արդյունք չեն տվել, և երբ ծագել է իրական և անմիջական վտանգ

¹⁴ Տե՛ս <https://rm.coe.int/16807c4b74> կայքէջում, կետ 24:

կյանքի համար: Ավելին, հատուկ կարգով ընտրված և ուսուցանված քրեակատարողական աշխատողները միայն պետք է իրավունք ունենան օգտագործել այդ սարքերը, և դրանք օգտագործելիս պետք է ձեռնարկվեն նախազգուշական բոլոր անհրաժեշտ միջոցները¹⁵:

Եվրոպական դատարանը Անջելո Ջորջին ընդդեմ Բուլղարիայի վերաբերյալ վճռով ձևավորած նախադեպային իրավունքի շրջանակներում նաև հղում է կատարել ԽԿԿ կողմից սահմանված խիստ վերապահումներին, որոնք վերաբերում են էլեկտրահարող սարքերի օգտագործմանը, հատկապես, երբ դրանք կիրառվում են հպման միջոցով, քանի որ պատճառում են ուժեղ ցավ և հանգեցնում ժամանակավոր անշարժացման: Այս առնչությամբ Եվրոպական դատարանը նշել է, որ *պատշաճ պատրաստված իրավապահները փորապետում են հսկողության բազմաթիվ այլ մեթոդների, երբ այն անձը, որին պետք է վերցնեն իրենց հսկողության տակ գտնվում է ֆիզիկական հասանելիության սահմաններում*¹⁶:

Վերոնշյալից պարզ է դառնում, որ միջազգային իրավական ակտերը, հաշվի առնելով էլեկտրահարող սարքերի և կայծային պարպիչների կիրառման արդյունքում մարդու կյանքի և առողջության վրա հնարավոր բացասական հետևանքներ առաջ բերելու մեծ վտանգավորությունը, նախատեսում են ինչպես դրա կիրառման լրացուցիչ, առավել խիստ պահանջներ և երաշխիքներ, այնպես էլ հենց այդ սարքավորումներին տեխնիկապես ներկայացվող պահանջներ:

Այսպիսով, էլեկտրահարող սարքերը և կայծային պարպիչները կարող են կիրառվել ազատությունից զրկված անձի կողմից կյանքի համար իրական և վերահաս սպառնալիքի կամ մարմնական ծանր վնասվածք պատճառելու ռիսկի առկայության դեպքում, և երբ նվազ հարկադրանք պարունակող մեթոդներն արդեն կիրառվել և արդյունք չեն տվել, կամ դրանց կիրառությունը գործնականում հնարավոր չէ: Ավելին, համաձայն վերոնշյալ իրավական նորմերի՝ էլեկտրահարող սարքերը փակ հաստատություններում կարող են կիրառվել խիստ բացառիկ դեպքերում:

Նշվածի կապակցությամբ հարկ է նշել, որ «Քրեակատարողական ծառայության մասին» և «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքները այն դատում են համապատասխանաբար քաղաքացիական զենքի և հատուկ միջոցների տեսակների շարքին և դրա կիրառության վրա տարածվում են քաղաքացիական զենքի և հատուկ միջոցների (ռետինե մահակներ, ձեռնաշղթաներ և ոտնաշղթաներ, ուշադրությունը շեղող լուսաձայնային միջոցներ, արգելքներ քանդող միջոցներ, ջրանետեր կամ գրահամեքենաներ, ծառայողական շներ) կիրառման ընդհանուր պայմանները:

¹⁵Տե՛ս

<https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=09000016806961f8> կայքէջում, կետ 111:

¹⁶ Տե՛ս Անջելո Ջորջին ընդդեմ Բուլղարիայի վերաբերյալ Եվրոպական դատարանի վճիռը, թիվ 51284/09, 30.09.2014 թվական, հասանելի է՝ <https://hudoc.echr.coe.int/fre?i=002-10077> հղումով, կետեր 75-76:

Հաշվի առնելով խնդրո առարկա միջոցների նկատմամբ կիրառելի միջազգային չափանիշները՝ անհրաժեշտ է բացառել որպես մարդու հոգեկան և ֆիզիկական անձեռնմխելիության վրա առավել նվազ ազդեցություն ունեցող միջոցների (ռետինե մահակներ, ձեռնաշղթաներ, ոտնաշղթաներ և այլն) կիրառման պայմանների և չափանիշների տարածումը էլեկտրահարող սարքավորումների նկատմամբ՝ նախատեսելով փակ տարածքներում դրանց գործադրման առավել խիստ չափանիշներ և պայմաններ: Ավելին, մեջբերված միջազգային իրավական նորմերը նախատեսում են, որ բեկորներ արձակող էլեկտրահարող սարքավորումների գործադրման նկատմամբ պետք է կիրառվեն զենքի գործադրմանը ներկայացվող պահանջները:

Միջազգային իրավական չափանիշների համաձայն՝ էլեկտրահարող սարքավորումները պետք է համալրված լինեն նաև հիշողության կրիչներով՝ դրանց կիրառման վերահսկման նպատակով: Նշվածը հնարավորություն կտա հետագայում պարզելու էլեկտրահարող սարքի կիրառման ստույգ ժամը, տևողությունը, լիցքի ուժգնությունը: Այնինչ, կանխարգելման ազգային մեխանիզմի կողմից իրականացված մշտադիտարկման այցերի ընթացքում բազմիցս արձանագրվել է, որ քրեակատարողական հիմնարկներում հանդիպող էլեկտրահարող սարքերը հիշողության կրիչներով ապահովված չեն: Նշվածը հաստատվել է նաև Մարդու իրավունքների պաշտպանի՝ էլեկտրահարող սարքերի քանակի և հիշողության կրիչներով դրանց ապահովվածության վերաբերյալ հարցադրումների կապակցությամբ Արդարադատության նախարարությունից 2024 թվականին ստացված տեղեկություններով, համաձայն որոնց՝ քրեակատարողական հիմնարկներում առկա ընդհանուր թվով 26 էլեկտրահարող սարքերը հիշողության կրիչներով ապահովված չեն:

Հարկ է շեշտել, որ էլեկտրահարող սարքավորման արձակած պարպման լիցքի ուժգնության և քանակի վերաբերյալ տեղեկատվության առկայությունը համարվում է կարևոր, քանի որ հետագա քննության իրականացման ընթացքում հնարավորություն է տալիս տեղեկություններ ստանալու ծառայողի գործողությունների և դրանց արդյունքում հասցված հետևանքների պատճառահետևանքային կապի և հնարավոր ազդեցության մասին:

Հիշյալ միջազգային չափանիշների համատեքստում հարկ է անդրադառնալ նաև հատուկ խոցելիությամբ ազատությունից զրկված անձանց նկատմամբ էլեկտրահարող սարքերի գործադրման բացարձակ արգելքին:

Այսպես, «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *արգելվում է քաղաքացիական զենք կամ հատուկ միջոցներ գործադրել հղիության ակնհայտ նշաններ ունեցող կանանց, ակնհայտ հաշմանդամություն ունեցող անձանց և անչափահասների նկատմամբ, բացառությամբ նրանց կողմից զինված դիմադրություն ցույց տալու և*

քրեակատարողական ծառայողի կյանքին կամ առողջությանը սպառնացող գործողություններ կատարելու դեպքերի:

«Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ արգելվում է հատուկ միջոցները գործադրել հղիության նկատմամբ նշաններով կանանց, ակնհայտ հաշմանդամություն ունեցող անձանց և անչափահասների նկատմամբ (բացառությամբ նրանց կողմից զինված հարձակում գործելու, զինված դիմադրության, մարդկանց կյանքին ու առողջությանը սպառնացող խմբակային հարձակման դեպքերի) (...):»:

Այնուամենայնիվ, հաշվի առնելով էլեկտրական լիցքերի մարդու կյանքի և առողջության վրա հնարավոր բացասական ազդեցության տարատեսակ դրսևորումները՝ կարևոր է որոշակի խոցելիությամբ անձանց (սրտանոթային հիվանդություններ ունեցող, մետաղական կոնստրուկցիա կրող, տարիքային բարձր շեմում գտնվող և այլն) նկատմամբ բացառել կայծային պարպիչների և էլեկտրահարող սարքերի գործադրումը:

Կանխարգելման ազգային մեխանիզմն ուսումնասիրել է նաև ազատությունից զրկման վայրերում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ որպես զսպման միջոց հատուկ միջոցների կիրառման իրավաչափության հարցերը:

Այսպես, կանխարգելման ազգային մեխանիզմի կողմից իրականացված մշտադիտարկման այցերի ընթացքում արձանագրվել են դեպքեր, երբ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց կողմից ագրեսիվ վարք ցուցաբերելու դեպքում վերջիններիս նկատմամբ, որպես զսպման միջոցներ, կիրառվել են ֆիզիկական ուժ և հատուկ միջոցներ:

Այսպես, «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկ իրականացված այցի ընթացքում, թեև բժշկական անձնակազմի հավաստել են, որ հոգեբուժական բաժանմունքում ֆիզիկական զսպման միջոցներ առկա չեն և չեն կիրառվում, այնուամենայնիվ, ուսումնասիրությունները ցույց են տվել, որ անհրաժեշտության դեպքում «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի հոգեբուժական բաժանմունքում անձանց նկատմամբ, որպես ֆիզիկական զսպման միջոց, կիրառվում են ֆիզիկական ուժ (ձեռնամարտի հնարք), ձեռնաշղթաներ, ինչպես նաև մեկուսացում:

Ուստի, անհրաժեշտ է բացառել հոգեկան առողջության խնդիրներ ունեցող ազատությունից զրկված անձանց նկատմամբ «Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքով չնախատեսված զսպման միջոցների կիրառումը, մասնավորապես՝ քրեակատարողական հիմնարկներում հատուկ միջոցները՝ որպես զսպման միջոց կիրառելու պրակտիկան:

Վերոնշյալի համատեքստում անդրադառնալով հատուկ միջոց հանդիսացող ձեռնաշղթաների և ոտնաշղթաների կիրառմանը՝ հարկ է նշել, որ ինչպես միջազգային չափորոշիչները, այնպես էլ ներպետական իրավական կարգավորումները նախատեսում են կալանավորված անձանց և

դատապարտյալներին տեղափոխելիս անվտանգության նկատառումներով դրանց կիրառման իրավական հնարավորությունը:

Այս կապակցությամբ ԵԲԿ 68.2-րդ կետը սահմանում է, որ *ձեռնաշղթաներ, զսպաշապիկներ և մարմինը զսպող այլ պարագաներ չեն կարող օգտագործվել, բացառությամբ հետևյալ դեպքերի.*

ա. անհրաժեշտության դեպքում՝ տեղափոխման ժամանակ փախուստը կանխելու նպատակով, սակայն պայմանով, որ դատական կամ վարչական մարմնի առջև բանտարկյալի ներկայանալու ժամանակ դրանք պետք է հանվեն՝ բացառությամբ երբ այդ մարմինը որոշում է կայացնում դրանք չհանելու մասին, կամ

բ. բանտի տնօրենի կարգադրությամբ, եթե հսկողության այլ մեթոդները չեն բավականացնում, որ բանտարկյալը պաշտպանվի ինքն իրեն կամ ուրիշներին վնաս պատճառելուց, կամ որ գույքին լուրջ վնաս չպատճառվի, սակայն պայմանով, որ նման դեպքերում տնօրենն այդ մասին անհապաղ ծանուցի բժշկին և զեկուցի քրեակատարողական վերադաս մարմնին»:

Միաժամանակ, Արդարադատության նախարարի 2011 թվականի նոյեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության անվտանգության ապահովման կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության կարգը հաստատելու մասին» N 194-Ն որոշման 63-րդ կետի համաձայն՝ *անհրաժեշտության դեպքում կալանավորված անձի կամ դատապարտյալի ուղեկցորդումն իրականացվում է երկու ծառայողի կողմից՝ օգտագործելով ձեռնաշղթա, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև ոտնաշղթա:*

Շլյկովը և այլք ընդդեմ Ռուսաստանի վերաբերյալ գործով Եվրոպական դատարանի կողմից ևս արձանագրվել է, որ *ազատությունից զրկված անձի նկատմամբ ձեռնաշղթաների կիրառումը կարող է արդարացված լինել որոշակի դեպքերում, օրինակ՝ բանտից դուրս փոխադրումների ընթացքում, եթե դրանք օգտագործվել են կարճաժամկետ կամ հանդիսացել դիմումատուի նկատմամբ կիրառվող անհատական և պարբերաբար վերանայվող միջոց, որը բխում է նրա վարքի հիման վրա կատարված անհատական ռիսկերի գնահատումից¹⁷:*

Կարևոր է ընդգծել, որ Եվրոպական դատարանն այս համատեքստում դաժանության աստիճանը գնահատելու ընթացքում անդրադառնում է մի շարք գործոնների, օրինակ, միջոցի համապատասխանությանը ներպետական օրենսդրությանը, միջոցի համաչափությանն անհատի գործողություններին, ազատությունից զրկելու օրինականությանը, վերաբերմունքի հանրային բնույթին, առողջության համար հետևանքներին, գանգատաբերի առողջական վիճակին,

¹⁷ Տե՛ս Շլյկովը և այլք ընդդեմ Ռուսաստանի վերաբերյալ Եվրոպական դատարանի վճիռը, գանգատ թիվ 78638/11, 31.05.2021 թվական, կետ 75, հասանելի է՝ <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-207371> հղումով:

ձեռնարկված այլ անվտանգային միջոցառումներին, ձեռնաշղթաների կիրառման տևողությանը և այլն:

Միաժամանակ, Եվրոպական դատարանի դիրքորոշման համաձայն՝ հատուկ միջոցների կիրառումը, ինչպիսին են ձեռնաշղթաները, կարող են քննարկվել Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտման շրջանակներում այն դեպքում, երբ դա անձի վրա ունեցել է ֆիզիկական կամ հոգեբանական ազդեցություն կամ ուղղված է եղել նրան նվաստացնելուն (Ռենինեն ընդդեմ Ֆինլանդիայի, 1997, §§ 63-64):

Այսպիսով, թեև վերոնշյալ իրավանորմերի բովանդակությունից պարզ է դառնում ազատությունից զրկված անձանց նկատմամբ հատուկի միջոցների և քաղաքացիական զենքի կիրառման հիմքերից զատ նաև վերջիններիս ուղեկցումների դեպքում ձեռնաշղթաների և ոտնաշղթաների կիրառումը, այնուամենայնիվ, դրանց գործադրմամբ ազատությունից զրկված անձանց ուղեկցումները պետք է իրականացվեն միայն հիմնավորված անհրաժեշտության պարագայում՝ անձի վարքագծով պայմանավորված ռիսկի գնահատման արդյունքների հիման վրա և անհրաժեշտ ամենակարճ ժամանակամիջոցում՝ առանց անձի արժանապատվությունը նվաստացնելու:

6. Քրեակատարողական հիմնարկներում և ՁՊՎ-ներում հատուկ միջոցների և զենքերի պահպանությունը, ինչպես նաև դրանց խոտանման, նոր միջոցներով փոխարինման գործընթացի պատշաճ կանոնակարգումը.

Ազատությունից զրկված անձանց նկատմամբ ներգործության միջոցների կիրառման իրավաչափության տեսանկյունից կարևոր է նաև քրեակատարողական հիմնարկներում և ՁՊՎ-ներում դրանց պատշաճ պահպանությունը, խոտանումը և նոր միջոցներով փոխարինումը:

Շարունակում է խնդրահարույց մնալ հատուկ միջոցների և զենքերի պահպանումը, որին Պաշտպանը անդրադարձել է նաև կանխարգելման ազգային մեխանիզմի 2021, 2022 և 2023 թվականների գործունեության վերաբերյալ տարեկան զեկույցներում¹⁸:

ՁՊՎ-ներում հատուկ միջոցների պահման կապակցությամբ հարկ է նշել, որ 2023 և 2024 թվականներին ՆԳՆ և ԱԱԾ ՁՊՎ-ներում իրականացված մշտադիտարկման այցերի ընթացքում արձանագրվել է, որ այցի պահին որոշ ՁՊՎ-ներում պահվել են հատուկ միջոցներ՝ ձեռնաշղթաներ, էլեկտրահարող սարք և մահակ՝ էլեկտրահարող ելուստներով:

Մասնավորապես, 2024 թվականին ՆԳՆ ոստիկանության Կոտայքի բաժնի ՁՊՎ կատարած մշտադիտարկման այցի ընթացքում ձեռնաշղթաները պահվել են օրվա հերթապահ ծառայողի աշխատասենյակում՝ կողապահարանի բաց տեսանելի

¹⁸ Տե՛ս <https://ombuds.am/images/files/c633369afec7fa8d34d985ee99c2aeaa.pdf> կայքէջում, էջ 209:

հատվածում՝ հասանելի վայրում: ՁՊՎ-ներում իրականացված մշտադիտարկման արդյունքում արձանագրվել են, որ ՁՊՎ-ում առկա հատուկ միջոցների պահման հատուկ պայմաններ նախատեսված չեն:

Դեպքի կապակցությամբ ԿԱՄ-ը հետագայում ՆԳՆ-ից ստացել է տեղեկություններ առ այն, որ ձեռնաշղթաներն օրվա հերթապահ ծառայողի աշխատասենյակում պահվել են նախորդիվ գործածվելուց հետո, դրանք պետք է հանձնվեին բաժնի հերթապահին և աշխատասենյակից արդեն իսկ հեռացվել են: Սակայն, կարևոր է, որ ՁՊՎ-ներում ապահովվեն և վերահսկվեն հատուկ միջոցների պահպանության և տնօրինման պայմանները՝ դրանց անհարկի կիրառման դեպքերը բացառելու համար:

Ներգործության միջոցների կիրառման գործընթացում կարևոր նշանակություն ունի նաև դրանց խոտանման և նոր միջոցներով փոխարինման աշխատանքների կազմակերպումը:

Հատկանշական է, որ դեռևս 2021 թվականին «Արմավիր» ՔԿՀ իրականացված մշտադիտարկման այցի ընթացքում արձանագրվել է, որ գազային զենքերը եղել են ժամկետանց (պահպանման ժամկետը եղել է մինչև 2020 թվականի նոյեմբերի 10-ը)¹⁹:

2022 թվականին «Գորիս» ՔԿՀ և 2023 թվականին «Սևան» ՔԿՀ կատարված մշտադիտարկման այցերի ընթացքում ևս արձանագրվել է, որ նշված հիմնարկներում պահվող արցունքաբեր գազերը եղել են ժամկետանց (պահպանման ժամկետը նշված է եղել 2020 թվականի նոյեմբերի 10-ը)²⁰: Ավելին, ժամկետանց արցունքաբեր գազեր են արձանագրվել նաև 2024 թվականին «Նուբարաշեն» ՔԿՀ կատարված մշտադիտարկման այցի ընթացքում (պահպանման ժամկետը եղել է մինչև 2020 թվականի նոյեմբերի 10-ը):

Փաստացի պատասխանատու գերատեսչությունը բավարար ջանքեր չի գործադրել դեռևս 2021 թվականից կանխարգելման ազգային մեխանիզմի կողմից արձանագրված ժամկետանց արցունքաբեր գազերի ամբողջական խոտանումը քրեակատարողական համակարգում իրականացնելու ուղղությամբ, ինչն անթույլատրելի է:

Հարկ է նշել, որ քրեակատարողական հիմնարկներում ժամկետանց կամ պիտանելիությունը կորցրած (օգտագործման ոչ ենթակա) հատուկ միջոցների խոտանման և նոր միջոցներով փոխարինման աշխատանքները կանոնակարգող կոնկրետ իրավական ակտ առկա չէ: Ավելին, ԱՆ տրամադրած տեղեկությունների համաձայն՝ վերջին տասը տարվա ընթացքում զենքի, հատուկ և ինքնապաշտպանական միջոցների դուրսգրման աշխատանքներ չեն իրականացվել:

¹⁹ Տե՛ս <https://www.ombuds.am/images/files/8e210585a756e539423e2b99c61b7493.pdf> կայքէջում, էջեր 172-173:

²⁰ Տե՛ս <https://www.ombuds.am/images/files/8e210585a756e539423e2b99c61b7493.pdf> կայքէջում, էջ 206:

Ներգործության միջոցների կիրառման գործընթացում կարևոր նշանակություն ունեն նաև դրանց խոտանման և նոր միջոցներով փոխարինման աշխատանքների անցկացման նպատակով նորմատիվ հիմքի նախատեսումն ու արդյունավետ իրականացումը՝ մարդու կյանքին և առողջությանը հասցվող հնարավոր վտանգավորությունը նվազեցնելու համար:

Պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեության վերաբերյալ տարեկան զեկույցներում պարբերաբար անդրադարձ է կատարվել հատուկ միջոցների և զենքերի խոտանման նպատակով համապատասխան կարգի նախատեսման անհրաժեշտությանը:

ԱՆ-ից ստացված տեղեկությունների համաձայն՝ պետական կառավարչական հիմնարկների և պետական ոչ առևտրային կազմակերպությունների լրիվ մաշված գույքի դուրսգրման կարգն իրականացվում է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի հոկտեմբերի 31-ի N 787-Ն հրամանով:

Այնուամենայնիվ, հաշվի առնելով ՔԿՀ հատուկ միջոցների և զենքերի շահագործումից դուրս բերման և խոտանման առանձնահատկությունները՝ խնդրահարույց է դրանց՝ առանց ընթացակարգային կարևոր գործոնների հաշվառման ընդհանուր կարգով իրականացումը:

Այս համատեքստում ժամկետանց և պիտանելիությունը կորցրած հատուկ միջոցների ու զենքերի խոտանման կարգի բացակայությունն ինքնին առաջ է բերում բազմաթիվ խնդիրներ, որոնց արդյունքում այդ միջոցները դուրս չեն բերվում շրջանառությունից, և հնարավոր է դառնում դրանց գործածելիությունը:

Ոստիկանության սպառազինության մեջ ընդգրկված միջոցները փոխարինվում են ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 23-ի «Հայաստանի Հանրապետության ոստիկանության սպառազինության մեջ ընդգրկված հրազենի և ռազմամթերքի տեսակների, հատուկ միջոցների և անհատական պաշտպանության միջոցների ցանկերը, ինչպես նաև դրանք սպառազինության մեջ ընդգրկելու, սպառազինությունից հանելու, հատուկ միջոցները և անհատական պաշտպանության միջոցները ոչնչացնելու կարգը հաստատելու մասին» N 867-Ն որոշմամբ սահմանված կարգով:

Մասնավորապես, հիշյալ որոշման հավելված 4-ի 1-ին կետի համաձայն՝ *Հայաստանի Հանրապետության ոստիկանության սպառազինության մեջ հրազենի, ռազմամթերքի, հատուկ միջոցների և ոստիկանության ծառայողի անհատական պաշտպանության միջոցների տեսակները (այսուհետ՝ տեսակներ) ընդգրկվում և դրանք սպառազինությունից հանվում են Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի կողմից ստեղծված հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) եզրակացությամբ: (...), իսկ 2-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովը եզրակացություն է տալիս Հայաստանի Հանրապետության ոստիկանության սպառազինության մեջ նոր տեսակներ ընդգրկելու կամ սպառազինության մեջ առկա տեսակները հանելու նպատակահարմարության մասին:*

Վերոնշյալ որոշման հավելված 4-ի 19-րդ կետի համաձայն՝ եթե Հայաստանի Հանրապետության ոստիկանության սպառազինության մեջ գտնվող հրազենի, ռազմամթերքի, հատուկ միջոցների կամ ոստիկանության ծառայողի անհատական պաշտպանության միջոցների առանձին տեսակներ հանվել են արտադրությունից, կամ կարող են փոխարինվել մարդու կյանքի կամ առողջության համար առավել նվազ վրանգավոր և արդյունավետ համանման այլ տեսակով, կամ այլևս օգտագործման համար պիտանի չեն, ապա հանձնաժողովը եզրակացություն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության ոստիկանության պեպին՝ տվյալ տեսակը Հայաստանի Հանրապետության ոստիկանության սպառազինությունից հանելու մասին:

Ավելին, հիշյալ որոշման 4-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանության սպառազինությունից հանված հատուկ միջոցները և անհատական պաշտպանության միջոցները փոխանցվում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն՝ ոչնչացնելու համար:

Ամփոփելով վերոգրյալը, անհրաժեշտ ենք համարում նշել, որ ՔԿՀ-ներում ժամկետանց և պիտանելիությունը կորցրած հատուկ և անհատական պաշտպանության միջոցների, ինչպես նաև զենքերի խոտանման համապատասխան կարգի բացակայության պայմաններում այդ միջոցները շարունակում են հասանելի լինել ծառայողներին, որոնց կիրառումը չափազանց վտանգավոր է ոչ միայն ազատությունից զրկված անձանց, այլև հենց այն կիրառողների կյանքի և առողջության համար:

7. ՔԿՀ և ՁՊՎ ծառայողների կողմից զենքի բաց կրումը՝ որպես անթույլատրելի հանգամանք.

Եվրոպական բանտային կանոնները սահմանում են նաև, որ բացառությամբ հրատապ օպերատիվ իրավիճակների, բանտի աշխատակիցները չպետք է բանտի շրջագծի ներսում մահաբեր զենք կրեն (69.1-րդ կետ): Այլ զենքի, այդ թվում՝ մահակների բաց կրումը բանտարկյալների հետ շփման մեջ գտնվող անձանց կողմից արգելվում է բանտի շրջագծի ներսում՝ բացառությամբ երբ դա անհրաժեշտ է կոնկրետ պատահարի դեպքում անվտանգություն ապահովելու համար: (69.2-րդ կետ):

Հիշյալ համատեքստի շրջանակներում կարևոր է նաև նկատի ունենալ, որ ԽԿԿ-ն մտահոգություն է հայտնել ՔԿՀ-ներում ծառայողների կողմից մահակների բացահայտ կրման վերաբերյալ: Մասնավորապես, ԽԿԿ-ն 2008 թվականին Պորտուգալիա կատարած այցի վերաբերյալ արձանագրել է, որ նման գործելակերպը նպաստավոր չէ անձնակազմի և ազատությունից զրկված անձանց միջև դրական հարաբերությունների զարգացման համար և, հատկապես, անտեղի է բանտային

հիվանդանոցային պայմաններում: Եթե բանփի աշխատակիցների համար անհրաժեշտ է մահակ կրել, ապա դրանք պետք է թաքցվեն տեսադաշտից²¹:

Հարկ է նկատել, որ թեև մշտադիտարկման այցերի ընթացքում քրեակատարողական հիմնարկների տարածքում քրեակատարողական ծառայողների կողմից զենքի տեսանելի կրման դեպքեր չեն արձանագրվել, այնուամենայնիվ, քրեակատարողական հիմնարկում ծառայողների կողմից զենքի կրումը (առանց վավերապայմանի) բացառող իրավական նորմեր առկա չեն:

Վերոնշյալի կապակցությամբ Արդարադատության նախարարի 2011 թվականի նոյեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության անվտանգության ապահովման կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության կարգը հաստատելու մասին» N 194-Ն որոշումը նախատեսում է միայն ծառայողների կողմից կալանավորված անձանց և դատապարտյալներին ուղեկցելու դեպքերում զենքի կրման պայմանները: Մասնավորապես, հիշյալ որոշման 60-րդ կետը սահմանում է, որ *կալանավորված անձանց և դատապարտյալների ուղեկցորդումը սույն կարգի 66-րդ կետով նախատեսված դեպքերում ծառայողների կողմից Հիմնարկի տարածքում իրականացվում է առանց զենքի:*

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է օրենսդրական մակարդակում նախատեսել քրեակատարողական հիմնարկում ծառայողների կողմից զենքի կրումը (առանց վավերապայմանի) բացառող իրավական նորմ:

8. Քրեակատարողական հիմնարկներում և ձերբակալվածներին պահելու վայրերում ազատությունից զրկված անձանց նկատմամբ ծառայողների կողմից անհամաչափ ներգործության գործադրման նկատմամբ վերահսկողության կառուցակարգերը և դրանց ներկայացվող պահանջները.

8.1 Քրեակատարողական և ոստիկանության ծառայողների կողմից անհամաչափ ներգործության գործադրման կապակցությամբ նախաձեռնված քրեական վարույթները և դրանց ներկայացվող պահանջները.

Քրեակատարողական և ոստիկանության ծառայողների կողմից օրենսդրությամբ սահմանված կարգով ազատությունից զրկված անձանց նկատմամբ ներգործության գործադրման ընթացքում հնարավոր են որոշակի թուլատրելիության սահմանազանցումներ, որոնք կարող են վերաճել ազատությունից զրկված անձանց նկատմամբ անմարդկային կամ վատ վերաբերմունքի, ընդհուպ խոշտանգման:

Ընդ որում, քրեական իրավունքի համատեքստում քրեակատարողական հիմնարկներում և ձերբակալվածներին պահելու վայրերում ծառայողների կողմից անհամաչափ ներգործության միջոցի գործադրման պարագայում քրեական

²¹ Տե՛ս <https://rm.coe.int/16806979b8> կայքէջում, կետ 91:

վարույթներ կարող են նախաձեռնվել ՀՀ քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով (պաշտոնատար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելը կամ լիազորություններն անցնելը, որը կատարվել է բռնությամբ կամ բռնություն գործադրելու սպառնալիքով), ինչպես նաև 450-րդ հոդվածով (խոշտանգում) նախատեսված հանցակազմերի հատկանիշներով:

ՄԻԵԿ 3-րդ հոդվածով նախատեսված խոշտանգման բացարձակ արգելքը ենթադրում է խոշտանգման և վատ վերաբերմունքի այլ դրսևորումների յուրաքանչյուր դեպքի կապակցությամբ արդյունավետ քննություն իրականացնելու պետության պոզիտիվ պարտականություն: «խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ» ՄԱԿ-ի 1984 թվականի կոնվենցիայի 12-րդ հոդվածի համաձայն՝ (...) պետությունն ապահովում է, որ իր իրավասու մարմիններն անհապաղ և անաչառ քննություն անցկացնեն, երբ առկա է բավարար հիմք ենթադրելու, որ խոշտանգում է կիրառվել իր իրավասությանը ենթակա ցանկացած փարածքում:

Արդյունավետ քննության մասով Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր դիրքորոշումներում բազմիցս ընդգծել է, որ *Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի տեսանկյունից պետության պոզիտիվ պարտականությունն է խոշտանգման դեպքերի արդյունավետ և մանրակրկիտ քննության իրականացումը*²²: Դատարանը շեշտել է, որ վատ վերաբերմունքի մասին բողոքների քննությունը պետք է լինի մանրակրկիտ և ամբողջական: Իրավասու մարմինները պետք է ձեռնարկեն բոլոր հնարավոր քայլերը կատարվածի հետ կապված ապացույցների ամրագրման համար²³:

Նշվածի կապակցությամբ Եվրոպական դատարանն արձանագրել է, որ ***անձի կողմից ձևական առումով հաղորդում ներկայացնելը որոշիչ նշանակություն չունի, քանի որ իրավասու մարմինների գիտությանը ներկայացված վատ վերաբերմունքի վերաբերյալ տեղեկատվությունը ipso facto առաջացնում է 3-րդ հոդվածով նախատեսված՝ արդյունավետ քննություն իրականացնելու պարտականություն***²⁴:

²² Տե՛ս Ասսենոլին և մյուսներն ընդդեմ Բուլղարիայի գործով 1998 թվականի հոկտեմբերի 28-ի վճիռը, գանգատ թիվ 28957/95, կետ 117 և Ակսոյն ընդդեմ Թուրքիայի գործով 1996 թվականի դեկտեմբերի 18-ի վճիռը, գանգատ թիվ 21987/93, կետ 98:

²³ Տե՛ս Բոյչենկոն ընդդեմ Մոլդովայի գործով 2006 թվականի հուլիսի 11-ի վճիռը, գանգատ թիվ 41088/05, կետ 123:

²⁴ Տե՛ս Էլ Մասրին ընդդեմ Նախկին Հարավսլավիայի Մակեդոնիայի Հանրապետության գործով 2012 թվականի դեկտեմբերի 13-ի վճիռը, գանգատ թիվ 39630/09, կետ 182, Գորգիեվն ընդդեմ Նախկին Հարավսլավիայի Մակեդոնիայի Հանրապետության գործով 2012 թվականի ապրիլի 19-ի վճիռը, գանգատ թիվ 26984/05, կետ 64:

Այսինքն՝ անգամ որևէ բողոքի բացակայության պայմաններում պետք է քննություն իրականացվի, **երբ խոշտանգման կամ վատ վերաբերմունքի վերաբերյալ առկա են բավարար չափով որոշակի նշաններ**²⁵:

Այս համատեքստում Եվրոպական դատարանը բազմիցս վերահաստատել է իր դիրքորոշումն առ այն, որ իրավասու մարմինները պարտավոր են իրենց նախաձեռնությամբ քննություն իրականացնել այն պահից սկսած, երբ համապատասխան հարցը հայտնվել է իրենց տրամադրության տակ²⁶:

Ամփոփելով վերոնշյալը՝ կարելի է արձանագրել, որ Կոնվենցիայի 3-րդ հոդվածով նախատեսված՝ արդյունավետ քննություն իրականացնելու պետության պարտականությունը ծագում է ինչպես անձի կողմից վստահելի հայտարարություն կամ վիճելի բողոք ներկայացնելու, այնպես էլ վատ վերաբերմունքի վերաբերյալ բավարար չափով հստակ նշանների առկայության դեպքում:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի ուսումնասիրության արդյունքում վեր են հանվել խոշտանգումների և վատ վերաբերմունքի դեպքերի արդյունավետ քննության հետևյալ սկզբունքային չափանիշները՝ **անկախություն և անկողմնակալություն, ամբողջականություն, անհապաղություն, տուժողի ներգրավվածություն ու հասարակական վերահսկողություն:**

Եվրոպական դատարանը Բոուիդը ընդդեմ Բելգիայի գործով արձանագրել է, որ *Կոնվենցիայի 3-րդ հոդվածը պահանջում է խոշտանգումների կամ վատ վերաբերմունքի դրսևորման դեպքերի քննության անհապաղություն, և այն պետք է իրականացվի ողջամիտ ժամկետներում: Թեև կարող են լինել դժվարություններ, որոնք խոչընդոտում են որոշակի իրավիճակում քննության ընթացքին, այնուամենայնիվ, պետության գործակալների կողմից խոշտանգման կամ վատ վերաբերմունքի դրսևորման մասին պնդումների անհապաղ քննությունը կարևոր է օրենքի գերակայության տեսանկյունից*²⁷: Դատարանը ընթացակարգային խախտում է արձանագրել այն դեպքում, երբ խոշտանգումների կամ վատ վերաբերմունքի դրսևորման դեպքերի կապակցությամբ վարույթն իրականացնող մարմնի կողմից վկաների ինքնությունը պարզելը կամ նրանց հարցաքննությունները կատարվել են անհիմն ձգձգումներով²⁸:

²⁵ Տե՛ս Օզբեյն ընդդեմ Թուրքիայի գործով 2001 թվականի մարտի 8-ի վճիռը, գանգատ թիվ 31883/96, կետ 85 և Եհովայի վկաների Գլդանի միաբանության 97 անդամները ընդդեմ Վրաստանի գործով 2007 թվականի մայիսի 3-ի վճիռը, գանգատ թիվ 71156/01, կետ 97:

²⁶ Տե՛ս ՄսԿեռն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով 2001 թվականի մայիսի 4-ի վճիռը, գանգատ թիվ 28883/95, կետ 111:

²⁷ Տե՛ս Բոուիդը ընդդեմ Բելգիայի գործով 2015 թվականի սեպտեմբերի 28-ի վճիռը, գանգատ թիվ 23380/09, կետ 121:

²⁸ Տե՛ս Բառանինը և Վուկցեվիկը ընդդեմ Մոնտենեգրոյի գործով 2021 թվականի հունիսի 11-ի վճիռը, գանգատներ թիվ 24655/18, կետ 142, Մաստասառուն և Սավիտիչը ընդդեմ Մոլդովայի գործով 2010 թվականի նոյեմբերի 2-ի վճիռը, գանգատ թիվ 38281/08, կետեր 88 և 93:

Եվրոպական դատարանը իր որոշումներում արձանագրել է, որ խոշտանգումների և վատ վերաբերմունքի դրսևորման դեպքերով քննությունը պետք է լինի մանրակրկիտ, ինչը նշանակում է, որ պետությունը միշտ պետք է լուրջ ջանքեր գործադրի՝ պարզելու տեղի ունեցածը, և չպետք է կայացնի քրեական վարույթը կարճելու որոշում՝ հիմնվելով հապճեպ կամ անհիմն եզրակացությունների վրա: Պետությունը պետք է ձեռնարկի հասանելի բոլոր ողջամիտ քայլերը՝ դեպքի վերաբերյալ ապացույցներ ձեռք բերելու համար, ներառյալ, ի թիվս այլնի, ականատեսների ցուցմունքները և դատաբժշկական փորձաքննության արդյունքները²⁹:

Հարկ է ընդգծել, որ Եվրոպական դատարանը Մ. Ֆ.-ն ընդդեմ Հունգարիայի գործով արձանագրել է, որ քրեական գործի քննությունը չի եղել արդյունավետ այն դեպքում, երբ վարույթն իրականացնող մարմինների՝ ոստիկանության ծառայողի կողմից անձի նկատմամբ վատ վերաբերմունք դրսևորելու վերաբերյալ պնդումները հիմնականում **հիմնվել են ենթադրյալ հանցագործությունը կատարած և այլ ոստիկանների հայտարարությունների, ինչպես նաև ոստիկանության ներքին փաստաթղթաշրջանառության արձանագրությունների վրա**³⁰:

ԽԿԿ-ն 2008 թվականին Մոնտենեգրո կատարած այցի արդյունքներով հայտնել է, որ երբ անձը պետական պաշտոնյաների կողմից ստացել է վնասվածք, կա հիմնավոր ենթադրություն, որ տվյալ անձը դաժան վերաբերմունքի է արժանացել, և իշխանությունների պարտականությունն է բավարար և համոզիչ բացատրություն տալ, թե ինչպես են պատճառվել վնասվածքները:

Ավելին, անհրաժեշտ է ունենալ նաև քննություն կամ դրա արդյունքների հանրային վերահսկողության բավարար տարր, ներառյալ՝ ենթադրյալ զոհերի ներգրավումն ընթացակարգերին և հանրությանը տեղեկատվություն տրամադրելը ընթացիկ հետաքննության կարգավիճակի վերաբերյալ, որպեսզի պատասխանատվությունն ապահովվի ինչպես գործնականում, այնպես էլ տեսականորեն³¹:

ՔԿՀ-ներում և ՁՊՎ-ներում ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի գործադրման վերաբերյալ քրեական վարույթների քննության, ինչպես նաև դրանց օրինականության նկատմամբ հսկողության արդյունավետության բարձրացման նպատակով ներքին իրավական ակտեր և հատուկ մեթոդաբանությամբ մշակված ուղեցույցներ ո՛չ ՀՀ քննչական կոմիտեում, և ո՛չ էլ ՀՀ գլխավոր դատախազությունում առկա չեն:

²⁹ Տե՛ս էլ Մասրին ընդդեմ նախկին Հարավսլավիայի Մակեդոնիայի Հանրապետության գործով 2012 թվականի դեկտեմբերի 13-ի վճիռը, գանգատ թիվ 39630/09, կետ 182:

³⁰ Տե՛ս Մ. Ֆ.-ն ընդդեմ Հունգարիայի գործով 2017 թվականի հոկտեմբերի 31-ի վճիռը, գանգատ թիվ 45855/12, կետ 55:

³¹ Տե՛ս <https://rm.coe.int/1680697753> կայքէջում, կետ 21:

Համապատասխան ներքին իրավական ակտերի և հատուկ մեթոդաբանությամբ մշակված ուղեցույցների առկայությունը և գործնականում դրանց կիրառության ապահովումը հնարավորություն կտա էլ ավելի արդյունավետ կերպով ուսումնասիրության առարկա դարձնել ներգործության միջոցների կիրառման դեպքերի ուսումնասիրումը, դրանց հնարավոր քրեաիրավական գնահատումը, բնութագիրը և տարանջատումը տարբեր հանցագործություններից, ինչպես նաև նշված դեպքերի վերաբերյալ հաղորդումների քննության առանձնահատկությունները նախաքննության սկզբնական և հետագա փուլերում և այլն:

Վերոհիշյալ իրողությունները թույլ են տալիս եզրակացնելու, որ գործադրվող ներգործության միջոցների իրավաչափության գնահատումն օբյեկտիվորեն ունի մի շարք բարդություններ, որոնք թե՛ ծառայողական և թե՛ քրեական վարույթի շրջանակներում իրականացվող քննության ու դրա օրինականության նկատմամբ դատախազական հսկողությունն իրականացնող պաշտոնատար անձանց համար առաջ են բերում իրավակիրառ պրակտիկայում ճիշտ կողմնորոշման անհրաժեշտություն: Հետևապես, առանցքային նշանակություն ունի այնպիսի իրավական կառուցակարգերի առկայությունը, որոնք, ոլորտային էական նշանակություն ունեցող հանգամանքների հաշվառմամբ, կապահովեն ինչպես ծառայողական քննությունների, այնպես էլ քրեական վարույթների քննության և դրանց նկատմամբ դատախազական հսկողության առավել բարձր արդյունավետություն:

8.2. Քրեակարարողական հիմնարկներում և ՁՊՎ-ներում ծառայողների կողմից ազատությունից զրկված անձանց նկատմամբ ներգործության միջոցների կիրառման ուսումնասիրությունը և ծառայողական քննությունները.

Անկասկած, ՔԿՀ և ՁՊՎ ծառայողների կողմից գործադրված ներգործության միջոցների ոչ իրավաչափ դրսևորումների առնչությամբ քննությունների նախաձեռնումն ու իրականցումն ունեն առանցքային նշանակություն՝ համանման դրսևորումների իսպառ բացառման և մեղավոր անձանց պատասխանատվության անխուսափելիության ապահովման հարցերում:

Այնուամենայնիվ, իրականացված ուսումնասիրությունների արդյունքում ի հայտ են եկել ներգործության միջոցների գործադրման իրավաչափության գնահատման նպատակով իրականացվող քննություններին վերաբերող մի շարք խնդիրներ, որոնք ունեն համակարգային լուծման անհրաժեշտություն:

Այսպես, սույն զեկույցի շրջանակներում ԱՆ-ից և ՆԳՆ-ից ստացված տեղեկությունների համաձայն՝ 2020-2024 թվականների ընթացքում ՔԿՀ-ներում և ՁՊՎ-ներում ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի գործադրման իրավաչափության վերաբերյալ որևէ ուսումնասիրություն կամ ծառայողական քննություն չի իրականացվել:

Ազատությունից զրկման վայրերում ներգործության միջոցների գործադրման վերաբերյալ ուսումնասիրությունների կամ ծառայողական քննությունների չանցկացումն ինքնին բացասական ազդեցություն ունի ծառայողների գործողությունների իրավաչափությունը ստուգելու և հնարավոր չարաշահումները կանխարգելելու տեսանկյունից:

Այս առումով էական նշանակություն ունի այն հանգամանքը, որ հենց իրավասու կառույցների ղեկավար կազմերն առաջին հերթին պետք է շահագրգռված լինեն հնարավոր իրավախախտումների վերհանման ու դրանց իրավական գնահատման հարցում, առանց որոնց հնարավոր չէ վատ վերաբերմունքի դեմ արդյունավետ ու համակողմանի պայքար մղել և մեղավոր անձանց պատասխանատվության ենթարկել:

Այս տեսանկյունից հարկ է անդրադառնալ նաև ՔԿՀ-ներում և ՁՊՎ-ներում ծառայողական քննության անցկացման միասնական իրավակիրառ պրակտիկայի բացակայությանը:

Այսպես, ՔԿՀ-ներում ծառայողական քննությունն իրականացվում է ընդհանուր կարգով՝ ՀՀ կառավարության 2018 թվականի հուլիսի 19-ի «Ծառայողական քննություն անցկացնելու կարգը սահմանելու մասին» N 814-Ն որոշման շրջանակներում, որի հավելվածի 33-րդ կետի համաձայն՝ **ծառայողական քննության նյութերում հանցագործությունների և (կամ) զանցանքների հատկանիշներ հայտնաբերվելու դեպքում դրա մասին հայտնվում է համապատասխան պետական մարմիններին, և ծառայողական քննությունը կասեցվում է:** Համապատասխան պետական մարմինների կողմից այդ հատկանիշները չհաստատվելու կամ դրանց հիման վրա Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան ընթացք տրվելու հիմքերի բացակայության դեպքերում ծառայողական քննությունը վերսկսվում է (...):»:

«ՀՀ ոստիկանության ներքին կարգապահական կանոնադրիքը հաստատելու մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածում նախատեսված են ծառայողական քննության կասեցման հիմքերը, համաձայն որոնց՝ ծառայողական քննություն իրականացնող անձն այն ամբողջությամբ կամ համապատասխան մասով **կարող է կասեցնել՝** այդպիսով այն իրականացնող անձի համար սահմանելով **հայեցողական լիազորություն:**

Հարկ է նշել, որ ազատությունից զրկված անձանց իրավունքների պաշտպանության և ներգործության միջոցների գործադրման դեպքերի նկատմամբ հսկողության տեսանկյունից ակնհայտ չէ, թե ինչ հիմքերով ու հիմնավորումներով են պատճառաբանվում քրեակատարողական հիմնարկներում և ՁՊՎ-ներում ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի կիրառման դեպքերի առնչությամբ նախաձեռնված ծառայողական քննությունների իրականացման կապակցությամբ տարբերակված մոտեցումները:

ՔԿՀ-ներում և ՁՊՎ-ներում ազատությունից զրկված անձանց նկատմամբ անհամաչափ ներգործության միջոցների գործադրման կապակցությամբ ծառայողական քննությունների անցկացման օրենսդրական իրավակարգավորումների տարբերությունը խնդրահարույց է ներգործության միջոցների գործադրման դեպքերի իրավաչափության գնահատման՝ իրավակիրառ պրակտիկայի միասնականության ապահովման տեսանկյունից:

Ուստի, հստակ չափանիշներով իրավակարգավորումների նախատեսմամբ անհրաժեշտ է ունենալ ծառայողների գործողությունների իրավաչափության գնահատման միասնական գործիքակազմ, որը հանրային և մասնավոր շահերի արդարացի հավասարակշռմամբ հնարավորություն կտա իրավասու պետական մարմիններին առավել արդյունավետ կերպով իրականացնելու իրենց լիազորությունները:

Հիշյալ նպատակին հասնելու համար կարևոր է, որ անկախ ծառայողական քննության անցկացման կամ քրեական վարույթի քննության հանգամանքներից՝ թե՛ քրեակատարողական ծառայությունում և թե՛ ՆԳՆ-ում իրականացվեն համապատասխան ուսումնասիրություններ, և հաշվի առնելով դրանց արդյունքները՝ ապահովվեն ներգործության միջոցների գործադրման պրակտիկ խնդիրների վերհանումը, դրանց հիման վրա ուղեցույցների մշակումը, հատուկ միջոցների կիրառման ընթացակարգերի միասնականացումը և լավարկումը:

8.3. Քրեակատարողական հիմնարկներում և ձերբակալվածներին պահելու վայրերում ծառայողների կողմից ազատությունից զրկված անձանց նկատմամբ ներգործության միջոցների գործադրման իրավաչափության նկատմամբ վերահսկողության արդյունավետության երաշխիքներ.

ՔԿՀ-ներում և ՁՊՎ-ներում ազատությունից զրկված անձանց կողմից՝ ներգործության միջոցների գործադրման իրավաչափության համապատասխան բողոքարկման կառուցակարգերի ներդնումն ունի առանցքային նշանակություն, քանի որ ազատությունից զրկված անձինք իրենց կարգավիճակով պայմանավորված համարվում են խոցելի և այդպիսով իրենց հիմնարար իրավունքների պաշտպանությունը ենթադրում է լրացուցիչ քայլերի ձեռնարկում:

Անշուշտ, հիշյալ նպատակին հասնելու ճանապարհին անհրաժեշտ է ունենալ ՔԿՀ և ՁՊՎ ծառայողների կողմից ներգործության միջոցների իրավաչափության ստուգման պատշաճ իրավական կառուցակարգեր՝ ոլորտային առանձնահատկությունների հաշվառմամբ:

Այս հանգամանքը կարևորվել է նաև ԽԿԿ-ի կողմից: Մասնավորապես, 2023 թվականի Կիպրոս կատարած այցելության վերաբերյալ զեկույցում արձանագրվել է, որ *զուգահեռաբար, որքան էլ մի շարք հրահանգներ են ընդունվում և բաշխվում ազատությունից զրկված անձանց խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացուցիչ հրապարակման կամ վերաբերմունքի արգելման և զրոյական*

հանդուրժողականության վերաբերյալ, այնուամենայնիվ, անհրաժեշտ է նաև խցերում փակցվեն վերջիններիս իրավունքների հետ կապված տրված հրահանգները, այդ թվում՝ ինչպես շփվել և նամակագրվել մարդու իրավունքների պաշտպանության ազգային և եվրոպական մարմինների հետ³²:

Այսպես, «Քրեակատարողական ծառայության մասին» օրենսգրքի 121-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատապարտյալը, ինչպես անձամբ, այնպես էլ փաստաբանի կամ օրինական ներկայացուցչի միջոցով իրավունք ունի բողոքարկելու պատիժ կատարող հիմնարկների կամ մարմինների պաշտոնատար անձանց գործողությունը, անգործությունը կամ ընդունած որոշումը՝ վերադասության կարգով կամ համապատասխանաբար պատժի կրման վայրի դատարան:

«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեակատարողական ծառայողի գործողությունները կարող են բողոքարկվել վերադասության կարգով կամ դատարան:

«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ձերբակալված և կալանավորված անձինք ինչպես անձամբ, այնպես էլ պաշտպանի կամ օրինական ներկայացուցչի միջոցով իրավունք ունեն բողոքարկելու՝ ձերբակալվածներին պահելու վայրի և կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմերի գործողությունները (...):

Գործադրված ներգործության միջոցների իրավաչափությունը վիճարկելու համար կարևոր է օրենսդրությամբ ամրագրել դրանց գործադրումից հետո կազմվելիք զեկուցագրի պատճենն ազատությունից զրկված անձին հանձնելու պարտադիր պահանջ:

Գործադրված ներգործության միջոցների իրավաչափությունը վիճարկելու գործընթացում մեկ այլ կարևոր բաղադրիչ է ազատությունից զրկման վայրի ծառայողի բացահայտումը, որպես սուբյեկտ: Նշվածի համատեքստում կարևոր է ներգործության միջոցների կիրառող ծառայող(ներ)ի նույնականացումը:

ԽԿԿ պահանջների համատեքստում կարևոր է անդրադառնալ նաև ՔԿԿ և ՁՊՎ ծառայողների կողմից ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում համազգեստների վրա անհրաժեշտ նույնականացման նշանների առկայության հարցին:

Քրեակատարողական ծառայողներն իրենց գործառութային պարտականությունների իրականացման ժամանակ կրում են համապատասխան միասնական ձևանմուշի համազգեստ, որի նկարագիրը սահմանված է ՀՀ Կառավարության 2019 թվականի հունիսի 20-ի՝ «Քրեակատարողական ծառայողների հանդերձանքի, այդ թվում՝ համազգեստի նկարագիրը, այն տրամադրելու, կրելու կարգը, ժամկետները և պայմանները սահմանելու մասին» N 776-Լ որոշմամբ: Վերոնշյալ որոշմամբ քրեակատարողական ծառայողների

³² Տե՛ս <https://rm.coe.int/1680afb22c> կայքէջում, կետ 116:

համազգեստի համար անձնական նույնացման նշաններ կամ տարբերանշաններ նախատեսված չեն:

Սույն զեկույցի շրջանակներում ՆԳՆ-ից ստացված տեղեկությունների համաձայն՝ ոստիկանության ծառայողները ծառայության ընթացքում մշտապես տեսանելի կերպով ծառայողական համազգեստի վրա կրում են անձնական նույնականացման տարբերանշաններ:

Այնուամենայնիվ, մշտադիտարկման այցերի ընթացքում դիտարկված ՁՊՎ-ներում ոստիկանության ծառայողների հանդերձանքները չեն ունեցել նույնականացման տարբերանշաններ:

Կարևոր ենք համարում արձանագրել, որ ՔԿՀ և ՁՊՎ ոստիկանության ծառայողների հանդերձանքի նույնականացման նշանների բացակայությունը կարող է հանգեցնել հնարավոր չարաշահումների՝ սովերեյն գործադրող ներգործությանը վերաբերելի հնարավոր իրավախախտումների հասցեական գնահատականի ապահովումը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է օրենսդրությամբ նախատեսել և պրակտիկայում ապահովել քրեակատարողական և ոստիկանության ծառայողների կողմից անհատական նույնականացման տարբերանշաններ կրող համազգեստի կրումը՝ ապահովելով ազատությունից զրկված անձանց նկատմամբ անհամաչափ ներգործության միջոցի կիրառած ծառայողի ինքնության բացահայտման հնարավորությունը:

Ներգործության միջոցների գործադրման ընթացքում հնարավոր իրավախախտումների ՔԿՀ և ՁՊՎ ծառայողների լիազորությունների չարաշահումների հայտնաբերումը կարևոր երաշխիք է հետագայում դրանց կանխարգելումն ապահովելու համար:

Առանցքային նշանակություն ունի այն հանգամանքը, որ հնարավոր իրավախախտումների հայտնաբերումն ինքնին կնպաստի ծառայողների կողմից թույլ տրված ոչ իրավաչափ գործողություններից հետագա բացառմանը, ծառայողական պարտականությունների արդյունավետ կատարմանը, ինչպես նաև կապահովի պատշաճ քննության իրականացման փաստական հիմքը:

Այս առումով հարկ է ընդգծել, որ որպես լրացուցիչ երաշխիք՝ ներգործության միջոցների գործադրման միջադեպերը պետք է արձանագրվեն կառույցի տեսանկարահանող սարքերի կամ ծառայողներին ամրակցված տեսախցիկների միջոցով՝ թափանցիկության և հաշվետվողականության նպատակով՝ պատշաճ կերպով հաշվի առնելով մասնավոր կյանքի գաղտնիության և անձեռնմխելիության իրավունքները:

ԻՄԿԿ-ն խոշտանգումների և վատ վերաբերմունքի կանխարգելման շրջանակներում 2010 թվականին Ալբանիա կատարած այցի շրջանակներում անդրադարձել է նաև «հատուկ միջամտության խմբերին», արձանագրելով, որ *պետք է ուշադրություն դարձնել նման խմբերի անդամների կողմից ծրագրված բոլոր*

միջամտությունների համար անվտանգ տեսանկարահանման կիրառմանը: ԽԿԿ արձանագրմամբ կարևոր է նաև, որ նման խմբերի սպաները բանտարկյալների հետ շփվելիս մշտապես ցուցադրեն նույնականացման միջոցներ³³:

Ավելին, 2009 թվականին Մոլդովա կատարած այցի շրջանակներում ԽԿԿ-ն արձանագրվել, որ շահագրգիռ առանձին պաշտոնյաների հետագա նույնականացումը պետք է հնարավոր լինի բոլոր դեպքերում: ԽԿԿ-ն կարևոր է համարել անհրաժեշտ միջոցների ձեռնարկումը՝ վերը նշված դիտարկումների լույսի ներքո, անհրաժեշտության դեպքում համապատասխան օրենսդրական դրույթները փոփոխմամբ³⁴:

ԽԿԿ-ն 2010 թվականին Գերմանիա կատարած այցի շրջանակներում նշել է, որ պետք է լինեն համապատասխան երաշխիքներ, որպեսզի ապահովվի, որ դիմակներ կամ այլ սարքավորումներ կրող պաշտոնյաները, որոնք կարող են խոչընդոտել իրենց ինքնության հաստատմանը և պատասխանատվության ենթարկվել իրենց գործողությունների համար (օրինակ՝ համազգեստի վրա հստակ և տեսանելի համարի միջոցով)³⁵:

Այսպես, Քրեակատարողական օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասերի համաձայն՝ դատապարտյալների կամ այլ անձանց անվտանգության ապահովման կամ այլ իրավաչափ շահերի պաշտպանության նպատակով՝ դատապարտյալների փախուստները, ինքնավնասումները, ինքնասպանությունները, պատժի կատարման սահմանված կարգի խախտումները, անկարգությունները, հանցանքները կամ այլ իրավախախտումները կանխելու կամ խափանելու նպատակով քրեակատարողական հիմնարկում և դրան հարող տարածքում կարող է իրականացվել էլեկտրոնային հսկողություն՝ տեսաձայնագրող միջոցների կամ այլ տեխնիկական միջոցների օգտագործմամբ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ էլեկտրոնային հսկողությունն իրականացվում է քրեակատարողական հիմնարկի պետի պատճառաբանված որոշմամբ՝ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված նպատակներով: Էլեկտրոնային հսկողության իրականացումը կարող է դադարեցվել քրեակատարողական հիմնարկի պետի որոշմամբ:

Հատկանշական է, որ մշտադիտարկված քրեակատարողական հիմնարկներից միայն «Վանաձոր» և «Արմավիր» քրեակատարողական հիմնարկների բնակելի գոտին է համալրված եղել էլեկտրոնային հսկողության համակարգերով: Էլեկտրոնային հսկողության համակարգերով համալրված են նաև որոշ քրեակատարողական հիմնարկների վարչական շենքերը (օրինակ՝ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկը) կամ առանձին շինություններ:

³³ Տե՛ս <https://rm.coe.int/1680667783> կայքէջում, կետ 46:

³⁴ Տե՛ս <https://rm.coe.int/16806975ac> կայքէջում, կետ 17:

³⁵ Տե՛ս <https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=0900001680696317> կայքէջում, կետ 17:

ՀՀ կառավարության 2023 թվականի օգոստոսի 31-ի «ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածների պահելու վայրերի շինության և կահավորման առանձնահատկությունները սահմանելու մասին» N 1487-Ն որոշման Հավելվածի 22-րդ կետի համաձայն՝ *ՁՊՎ-ն կահավորվում է հերթապահ մասին (հերթապահ ծառայությանը) միացված ահազանգման ազդանշանային համակարգերով, տեսաձայնագրման հնարավորությամբ տեսախցիկներով, որոնք տեղադրվում են մուտքերում, միջանցքներում, զբոսաբակում, ինչպես նաև միայն տեսագրման հնարավորությամբ տեսախցիկներով, որոնք տեղադրվում են քննչական և տեսակցության սենյակներում:*

Հարկ է նշել, որ քրեակատարողական հիմնարկներում և ՁՊՎ-ներում տեսաձայնագրումներ կատարելու համար կիրառվող էլեկտրոնային սարքերի չափանիշները և տեխնիկական բնութագրերը նորմատիվ իրավական ակտերով սահմանված չեն: Սահմանված չեն նաև քրեակատարողական հիմնարկներում, ՁՊՎ-ներում դրանց տեղադրությունը, տեսախցիկների տեսադաշտը, ինչպես նաև տեսաձայնագրությունների պահպանման հնարավորությունն ու հասանելիությունը:

Մշտադիտարկման այցերի ընթացքում Պաշտպանի ներկայացուցիչների կողմից ուսումնասիրության առարկա են դարձել նաև ՁՊՎ-ներում տեսաձայնագրման համակարգերը, դրանց տեղադրությունը, տեսախցիկների տեսադաշտը, ինչպես նաև տեսաձայնագրությունների պահպանման հնարավորությունն ու հասանելիությունը:

Արձանագրվել է, որ ՁՊՎ-ների միջանցքներում տեղադրված տեսախցիկներով հիմնականում հնարավոր է իրականացնել միայն այդժամյա առցանց տեսահսկում, իսկ տեսագրում կամ տեսաձայնագրում չի իրականացվում, իսկ որոշ հատվածներում առհասարակ տեղադրված չեն եղել որևէ տեսակի սարքեր:

Հարկ է շեշտել, որ կանխարգելման ազգային մեխանիզմի մշտադիտարկման այցերի ընթացքում որոշ ՁՊՎ-ների (օրինակ՝ Գորիս և Կապան) միջանցքներում տեղադրված տեսախցիկներով իրականացվել են տեսաձայնագրում, ինչը ողջունելի է, սակայն ՁՊՎ աշխատակիցների կողմից դրանց տեխնիկական անհասանելիության պատճառով Պաշտպանի աշխատակազմի՝ կանխարգելման ազգային մեխանիզմի ներկայացուցիչները հնարավորություն չեն ունեցել տեղում դիտարկելու դրանք:

Կարևոր է արձանագրել, որ ՔԿՀ կամ ՁՊՎ ծառայողների նույնականացումն ինքնին հետապնդում է այն կարևոր նպատակը, որ ներգործության գործադրման շրջանակներում հնարավոր լինի պարզել հնարավոր չարաշահումները, գործադրվող ներգործության համաչափության խախտումները և այլ իրավախախտումներ:

Ուստի, հաշվի առնելով ներգործության միջոցների գործադրման ընթացքի և արդյունքների փաստական ամրագրումը, կարծում ենք, որ հիշյալ գործընթացի

ընթացքում պատշաճ տեխնիկական չափանիշներ չունեցող տեսագրման համապատասխան միջոցների բացակայությունը չի կարող նպաստել ծառայողների գործողության ընթացքում հնարավոր չարաշահումների հայտնաբերմանը և արդյունքների ամրագրմանը:

Ազատությունից զրկված անձանց նկատմամբ ներգործության միջոցի կիրառման նկատմամբ հսկողություն իրականացնելու տեսանկյունից կարևոր է նաև այդ քրեակատարողական հիմնարկներում և ՁՊՎ-ներում դրանց պատշաճ արձանագրումն ու հաշվառումը:

Մարդու իրավունքների պաշտպանը՝ որպես կանխարգելման մեխանիզմ ազատությունից զրկման վայրեր կատարած մշտադիտարկման այցերի ընթացքում մշտապես ուսումնասիրում է ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի գործադրման դեպքերը, դրանց վերաբերյալ կազմվող գործերն ու արձանագրությունները, ինչպես նաև դրանց առնչվող այլ վիճակագրական տվյալներ:

Հատկանշական է, որ ՔԿՀ-ներ կատարած մշտադիտարկման այցերի ընթացքում արձանագրվել են, որ ՔԿՀ-ներում ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի գործադրման դեպքերը հաշվառվում են «Քրեակատարողական հիմնարկներում կալանավորված կամ դատապարտյալի նկատմամբ քրեակատարողական ծառայողների կողմից (այդ թվում ուղեկցողների, հատուկ նշանակության և այլ ստորաբաժանումների ծառայողների) գործադրված ֆիզիկական ուժի կամ հատուկ միջոցներ դեպքերը գրանցելու հաշվառման» մատյանում:

ՔԿՀ-ներում և ՁՊՎ-ներում ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի գործադրման դեպքերի արձանագրման, դրանց ուսումնասիրության և քննության վերաբերյալ սույն զեկույցի շրջանակներում Պաշտպանի հարցմանն ի պատասխան՝ ներկայացվել են միմյանցից էապես տարբերվող և իրար հակասող վիճակագրական տվյալներ:

Մասնավորապես, ԱՆ-ի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ 2020-2024 թվականների ընթացքում ՔԿՀ-ներում արձանագրվել է ֆիզիկական ուժի և հատուկ միջոցների կիրառման 181 դեպք:

Ըստ ՆԳՆ-ից ստացված տեղեկությունների՝ 2020-2024 թվականների ընթացքում ՁՊՎ-ներում ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի գործադրման որևէ դեպք չի արձանագրվել:

Մինչդեռ, Գլխավոր դատախազության տեղեկացմամբ՝ 2020 թվականից մինչև 2024 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում միայն ՔԿՀ-ներում արձանագրվել է ֆիզիկական ուժի և հատուկ միջոցների կիրառման 282, իսկ ՁՊՎ-ներում՝ 4 դեպք:

Ավելին, ըստ Գլխավոր դատախազության՝ 2020 թվականին ՔԿՀ-ներում արձանագրվել է ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի կիրառման 62, 2021 թվականին՝ 41, 2022 թվականին՝ 43, 2023 թվականին՝ 85, իսկ 2024 թվականի 1-ին

կիսամյակի տվյալներով՝ 51 դեպք: Իսկ ՁՊՎ-ներում 2020 և 2021 թվականներին ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի կիրառման դեպքեր չեն արձանագրվել, իսկ 2022 թվականին արձանագրվել է 1, 2022 թվականին՝ 3 և 2024 թվականի 1-ին կիսամյակի տվյալներով՝ 1 դեպք:

Գլխավոր դատախազությունից տեղեկացրել են նաև, որ ՔԿՀ-ներում և ՁՊՎ-ներում ֆիզիկական ուժի և հատուկ միջոցների կիրառման շուրջ 287 դեպքերի առնչությամբ նախաձեռնվել են 56 քրեական վարույթ, որոնք մինչդեռատական վարույթի օրինականության, ինչպես նաև պատիժների և հարկադրանքի միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության լիազորությունների կենսագործման շրջանակներում ուսումնասիրվել են Դատախազության ստորաբաժանումներում: Սակայն, վերը նշված դեպքերի վերաբերյալ որևէ քրեական վարույթ մեղադրական եզրակացությամբ դատարան չի ուղարկվել:

Սույն զեկույցի շրջանակներում Քննչական կոմիտեից ստացած տեղեկությունների համաձայն՝ 2022 թվականի հուլիսի 1-ից (երբ քրեադատավարական օրենսդրությամբ խոշտանգման վարույթներով նախաքննության կատարման լիազորությունները վերապահվել են ՀՀ քննչական կոմիտեին) կոմիտեում ՔԿՀ-ներում ֆիզիկական ուժի գործադրման դեպքերի առթիվ հարուցվել են շուրջ 15 քրեական վարույթներ (10 վարույթ ՀՀ քրեական օրենսգրքի 450-րդ հոդվածի 2-րդ մասով և 5 վարույթ 441-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով), որոնցից 7-ի վարույթը կարճվել է՝ քրեական օրենսգրքով նախատեսված որևէ հանցանքի բացակայության կամ որևէ անձի նկատմամբ քրեական հետապնդում չհարուցելու կամ մեղադրյալի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման կայացմամբ, երբ սպառվել են վարույթը շարունակելու բոլոր հնարավորությունները, իսկ 8 քրեական վարույթներով նախաքննությունը շարունակվում է:

ՔԿՀ-ներում և ՁՊՎ-ներում ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի գործադրման վերաբերյալ միասնական վիճակագրական տվյալներ չհավաքագրելու և չամբողջացնելու պրակտիկան խնդրահարույց է:

Հարկ է նշել, որ ՔԿՀ-ներում և ՁՊՎ-ներում ներգործության հիշյալ միջոցների հաշվառման նպատակով միասնական և ճշգրիտ վիճակագրության չվարումն ունի բացասական ազդեցություն՝ այդ միջոցների գործադրման դեպքերի քանակի, շարժընթացի և դինամիկայի մշտադիտարկման, դրանց իրավաչափության պատշաճ ուսումնասիրության և քննության ապահովման տեսանկյունից:

Անկասկած, առանց պատշաճ վիճակագրության վարման որևէ կերպ հնարավոր չի լինի հասցեական կերպով գնահատել կոնկրետ կառույցում ներգործության միջոցների գործադրման իրական պատճառները և իրավաչափությունը, վերհանել դրանք պայմանավորող գործոնների առկայությունը: Այդ են հավաստում ԱՆ և ՆԳՆ կողմից տրամադրված

տեղեկատվությունը, ըստ որի՝ ՔԿՀ-ներում և ՁՊՎ-ներում ներգործության միջոցների գործադրման վերաբերյալ որևէ ուսումնասիրություններ չեն իրականացվել:

9. Պատշաճ բժշկական օգնության երաշխավորումը՝ որպես գործադրված ներգործության միջոցների հետևանքների մեղմման երաշխիք.

ՔԿՀ-ներում և ՁՊՎ-ներում ներգործության միջոցների գործադրման պարագայում պատշաճ բժշկական զննության և ըստ անհրաժեշտության բժշկական օգնության ապահովումը համարվում է բացարձակ առաջնահերթություն:

Այս համատեքստում կարևոր է ընդգծել, որ առաջնային բժշկական օգնության ցուցաբերման հարցում կարևոր է հենց ներգործություն գործադրած ծառայողների մասնագիտական պատրաստվածության նվազագույն մակարդակի ապահովումը՝ հետևանքների հետագա բարդացումը կանխելու համար:

Այն իր կարևորությունն է ստացել նաև ՄԱԿ-ի՝ իրավապահ պաշտոնյաների կողմից ուժի և հրազենի կիրառման վերաբերյալ հիմնական սկզբունքներում: Մասնավորապես, համաձայն դրանց՝ *գործադրվող ներգործության միջոցների արդյունքում բժշկական օգնություն պետք ցուցաբերվի ցանկացած տուժած անձի հնարավորինս սեղմ ժամկետում*³⁶:

«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ *Ֆիզիկական ուժ, հափուկ միջոցներ և զենք գործադրելիս քրեակատարողական ծառայողը պարտավոր է մարմնական վնասվածքներ ստացած անձանց ցույց տալ առաջին օգնություն:*

«Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *Ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների ու հրազենի գործադրման պայմաններում ոստիկանության ծառայողը, ի թիվս այլնի, պարտավոր է նաև ցուցաբերել կամ ապահովել մարմնական վնասվածքներ ստացած անձանց առաջին բուժօգնությունը՝ բժշկական կազմակերպություններին անհապաղ հայտնելով մարմնական վնասվածքների ու մահվան բոլոր դեպքերի մասին:*

«Ձերբակալված և կալանավորված անձանց» մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ *ձերբակալված կամ կալանավորված անձը, իսկ ձերբակալված կամ կալանավորված անձի համաձայնության դեպքում նաև նրա պաշտպանն իրավունք ունեն պահանջելու անցկացնել բժշկական զննում:* Նույն օրենքի 21-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *ձերբակալված կամ կալանավորված անձի մոտ մարմնական վնասվածք հայտնաբերելու դեպքում ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի բուժաշխատողը կամ հրավիրված բուժաշխատողն անհապաղ կատարում է բուժզննություն, որին կարող է մասնակցել ձերբակալված կամ կալանավորված անձի ընտրած բժիշկը:*

³⁶ Տե՛ս <https://www.ohchr.org/en/instruments-mechanisms/instruments/bsic-principles-use-force-and-firearms-law-enforcement> կայքէջում:

Փաստացի, ՁՊՎ-ներում ներգործության միջոցների կիրառման պարագայում բժշկական զննություն հնարավոր է իրականացնել միայն ազատությունից զրկված անձի կամ նրա փաստաբանի պահանջով կամ բժշկական օգնության կարիքի կամ մահ արձանագրվելու պարագայում, ինչը մտահոգիչ է:

ՔԿՀ-ներում ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի գործադրման յուրաքանչյուր դեպքից հետո ազատությունից զրկված անձինք անմիջապես ենթարկվում են բժշկական զննության Առողջապահության նախարարության «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի համապատասխան աշխատակցի կողմից:

ՁՊՎ-ներում ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի գործադրման յուրաքանչյուր հնարավոր դեպքից հետո ազատությունից զրկված անձի (անձանց) կողմից առողջության վերաբերյալ գանգատ հայտնելու, ինչպես նաև մարմնական վնասվածքների առկայության դեպքերում, «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 7-րդ և 21-րդ հոդվածի 5-րդ մասերի համաձայն, *հրավիրված բուժանձնակազմի կողմից կցուցաբերվի բժշկական օգնություն:*

Կանխարգելման ազգային մեխանիզմը մշտադիտարկման այցերի ընթացքում արձանագրել է դեպքեր, երբ ազատությունից զրկված անձի նկատմամբ քրեակատարողական ծառայողների կողմից ներգործության միջոցի գործադրումից հետո բուժանձնակազմի կողմից անձի մոտ առկա մարմնական վնասվածքները չեն արձանագրվել, և «Խոշտանգման կամ վատ վերաբերմունքի այլ ձևերի հետ կապված բժշկական զննության արձանագրության» ձևաթուղթ չի կազմվել: Այսպես, 2024 թվականին «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի համապատասխան աշխատակիցների կողմից իրականացված օպերատիվ գործողություններից հետո մասնաշենքը սպասարկող բուժանձնակազմի կողմից սահմանված կարգով իրականացվել է ազատությունից զրկված անձի մարմնական զննություն, ինչի արդյունքում կազմվել է համապատասխան տեղեկանք ազատությունից զրկված անձի մարմնի տեսանելի հատվածում թարմ հետքերի (կարմրություն, այտուց, քերծվածք, վնասվածք և այլն) բացակայության վերաբերյալ: Այնուամենայնիվ, ազատությունից զրկված անձի բժշկական քարտում կատարվել է արձանագրում առ այն, որ ըստ վերջինիս հայտարարության՝ կարգուկանոնին չենթարկվելու համար «իրեն խոշտանգել են», սակայն բուժանձնակազմի կողմից «Խոշտանգման կամ վատ վերաբերմունքի այլ ձևերի հետ կապված բժշկական զննության արձանագրության» ձևաթուղթ չի կազմվել՝ հաշվի առնելով մարմնական վնասվածքների բացակայությունը: Հատկանշական է, որ «Քրեակատարողական հիմնարկներում կալանավորված կամ դատապարտյալի նկատմամբ քրեակատարողական ծառայողների կողմից գործադրված ֆիզիկական ուժի կամ հատուկ միջոցներ դեպքերը գրանցելու հաշվառման» մատյանում նույնպես արձանագրում չի կատարվել ներգործության միջոցի գործադրման վերաբերյալ:

Հարկ է ընդգծել, որ Պաշտպանի ներկայացուցիչների՝ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկ իրականացրած այցի ընթացքում տեղի ունեցած առանձնագրույցի ժամանակ ազատությունից զրկված անձի մարմնի տեսանելի տարբեր հատվածներում արձանագրվել են առկա վնասվածքները, որոնց վերաբերյալ գրություններ են հասցեագրվել ՀՀ գլխավոր դատախազություն, ինչպես նաև պատասխանատու գերատեսչություններին:

Այս համատեքստում կարևոր է նշել նաև, որ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը սահմանում է, որ *խոշորանգաման կամ վատ վերաբերմունքի այլ ձևերի հետ կապված բժշկական զննության արձանագրության ձևաթուղթը կազմվում է, եթե առկա է դատապարտյալի գրավոր կամ բանավոր հայտարարությունը՝ մարմնական վնասվածքը կամ առողջական վիճակի վերաբերյալ գանգադր խոշորանգաման կամ վատ վերաբերմունքի այլ դրսևորման հետևանք լինելու վերաբերյալ:*

Նույն հոդվածի 2-րդ մասը նախատեսում է, որ *ենթադրյալ խոշորանգաման կամ վատ վերաբերմունքի այլ դրսևորման յուրաքանչյուր դեպքում բուժաշխատողը պարտավոր է իրականացնել պատշաճ բժշկական զննություն և լրացնել արձանագրության ձևաթուղթը:*

Ուստի, նկատի ունենալով ներգործության միջոցների գործադրման դեպքերի պատշաճ ուսումնասիրությունը, նախևառաջ, կարևոր է, որ դրանք առանց բացառության փաստաթղթավորվեն, առավել ևս, երբ առկա է այդ մասին ազատությունից զրկված անձի բանավոր հայտարարությունը:

Ներգործության միջոցների գործադրման և դրա հետևանքով ազատությունից զրկված անձանց կյանքին և առողջությանը հասցված վնասների՝ օրենսդրությամբ սահմանված կարգի պահպանմամբ պատշաճ փաստաթղթավորումը կարևոր միջոց է հանդիսանում ոչ միայն մեղավոր անձանց հայտնաբերելու և պատասխանատվության ենթարկելու, այլև հետագա հնարավոր չարաշահումները կանխարգելելու համար:

Այսպես, ներգործության միջոցների գործադրման ցանկացած միջադեպից հետո անազատության մեջ գտնվող անձանց՝ պատշաճ բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքն այլընտրանք չունի:

Բժշկական հետազոտությունները պետք է անցկացվեն գաղտնի (ոչ բժշկական անձնակազմի տեսադաշտից և լսողությունից հեռու), իսկ արդյունքները պետք է գրանցվեն և հասանելի լինեն ներգործության գործադրման արդյունքում տուժած անձին:

Գործադրված ներգործության միջոցների հետ կապված բոլոր տվյալները պետք է ամբողջացվեն, արխիվացվեն և հասանելի լինեն ստուգման, վերլուծության և հրապարակման համար:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բժշկական օգնությունն ու սպասարկումը հանդիսանում են չափազանց կարևոր նշանակություն ունեցող պայման

ներգործության հիշյալ միջոցների հետևանքով վրա հասած հնարավոր բացասական հետևանքների հայտնաբերման և հակազդման համար՝ անհրաժեշտ է բոլոր դեպքերում, անկախ տեսանելի հետևանքների առկայությունից կամ անձի գանգատների մասին հայտնելուց, կազմակերպել և իրականացնել անհրաժեշտ հետազոտություններ:

Հիշյալ հանգամանքը կարևորվում է հատկապես այն պատճառով, որ ներգործության միջոցների կիրառման որոշ դեպքերում չի բացառվում հետևանքների ավելի ուշ ի հայտ գալու հանգամանքը:

Այսպիսով, անհրաժեշտ է ազատությունից զրկման վայրերում ներգործության միջոցների կիրառումից հետո պարտադիր կերպով կազմակերպել անձի բժշկական զննություն անցնելու հնարավորությունը, իսկ բժշկական զննություն անցնելու վերջինիս համաձայնության դեպքում պատշաճ արձանագրել նրա գանգատներն ու օբյեկտիվ զննության արդյունքները, ինչպես նաև նախաձեռնել օրենսդրությամբ սահմանված բոլոր միջոցները՝ կիրառած ներգործության միջոցների ընթացակարգերի օրինաչափությունը ստուգելու համար:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ՁՊՎ-ներում ներդնել ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և հրազենի գործադրման կանոնակարգման վերաբերյալ առանձին իրավական ակտ՝ ամրագրելով այնպեղ հնարավոր կիրառելի հատուկ միջոցների և զենքի տեսակները և մոդելները, դրանց կիրառման սահմանները, պահմաններն ու հիմքերը.

2. ՔԿՀ-ներում և ՁՊՎ-ներում ներգործության միջոցների՝ օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերի առավել արդյունավետ գործադրման, հնարավոր փակուղային և ռիսկայնության բարձր աստիճան ունեցող իրավիճակներում իրավաչափ գործողությունների դիմելու, ոչ ստանդարտ իրավիճակներում կողմնորոշվելու և իրավաչափ գործելու նպատակով արդյունավետ կլինի մշակել և գործնական կիրառության մեջ դնել հատուկ մեթոդաբանությամբ մշակված ուղեցույցներ.

3. ՔԿՀ-ներում և ՁՊՎ-ներում ազատությունից զրկված անձանց իրավախախտ վարքագծի հակազդման և ռիսկայնության կառավարման համար պետք է ստեղծել և կատարելագործել այնպիսի համալիր գործիքակազմ, որը հնարավորություն կտա համաչափ կերպով գործադրել անհրաժեշտ ներգործությունը՝ առանց անձի հիմնարար իրավունքների ոտնահարման.

4. ներգործության յուրաքանչյուր միջոցի համար մշակել զեկուցագրերի օրինակելի ձևանմուշներ, հաշվի առնելով դրանց գործադրման առանձնահատկություններն ու երաշխիքները, ինչպես նաև նշվածի հաշվառմամբ իրականացնել ծառայողների վերապատրաստումներ.

5. ՁՊՎ ծառայողների՝ որպես ազատությունից զրկված անձանց հետ ծառայություն փանող աշխատակիցների համար ֆիզիկական ուժի, հրազենի և օրենքով նախատեսված հատուկ միջոցներ կրելու, պահելու և գործադրելու նպատակով մշակել և գործնական կիրառության մեջ դնել վերապատրաստման հատուկ կրթական ծրագիր.

6. ՔԿՀ և ՁՊՎ ծառայողների հատուկ ուսուցման և վերապատրաստման ծրագրերում ներդնել հակաիրավական վարքագիծ ցուցաբերող անձանց հետ բանակցելու և խոսքի միջոցով լարվածության թոթափմանն ուղղված հմտությունների կատարելագործման դասընթացներ.

7. ցանկացած դեպքում բացառել համապատասխան պատրաստվածություն չունեցող ծառայողի կողմից ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և հրազենի գործադրման որևէ հնարավորություն.

8. քննարկման առարկա դարձնել ՔԿՀ-ներում և ՁՊՎ-ներում անվտանգային ռեժիմի լիարժեք ապահովման տեսանկյունից իրավապահ գործառույթներ իրականացնող պետական մարմինների ծառայողներին ևս անվտանգային

ռեժիմի պահպանմանն ուղղված միջոցառումներին ներգրավվելուն ուղղված իրավական կառուցակարգեր ներդնելու անհրաժեշտությունը:

9. Օրենսդրությամբ ամրագրել արցունքաբեր գազի՝ փակ տարածքներում օգտագործման, ինչպես նաև արդեն իսկ վերահսկողության փակ գտնվող անձի նկատմամբ արցունքաբեր գազի կիրառման արգելքը:

10. Օրենսդրությամբ ամրագրել բաց տարածքներում արցունքաբեր գազի կիրառման դեպքում՝ անձանց կյանքի և առողջության պաշտպանության նպատակով համապատասխան անվտանգության միջոցների նախատեսումը:

11. Սպառազինության լրակազմում ունենալ և կիրառության մեջ դնել միայն այնպիսի էլեկտրական (կայծային) պարպման զենքեր, որոնք ապահովված կլինեն հիշողության կրիչներով՝ արձանագրելու համար կիրառելու ստույգ ժամը, տևողությունը, լիցքի ուժգնությունը, ինչպես նաև պետք է ունենան փեսագրելու հնարավորություն:

12. Օրենսդրությամբ նախատեսել, որ էլեկտրական (կայծային) պարպման զենքերը փակ տարածքներում (օրինակ՝ խցերում) կարող են կիրառվել միայն խիստ բացառիկ հանգամանքներում:

13. Հաշվի առնելով էլեկտրական լիցքերի՝ մարդու կյանքի և առողջության վրա հնարավոր բացասական ազդեցության փարատեսակ դրսևորումները, օրենսդրական համապատասխան լրացումների կատարմամբ ընդլայնել ֆիզիոլոգիական և փարիքային առանձնահատկություններով պայմանավորված որոշակի խոցելիություն ունեցող անձանց (օրինակ՝ մեդաղական կոնստրուկցիաներ կրող, սրտանոթային հիվանդություններ ունեցող, փարիքային բարձր շեմում գտնվող անձանց և այլն) էլեկտրահարող սարքերի գործադրման բացարձակ արգելքը:

14. Բացառել հոգեկան առողջության խնդիրներ ունեցող ազատությունից զրկված անձանց նկատմամբ «Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքով չնախատեսված զսպման միջոցների կիրառումը, մասնավորապես՝ քրեակատարողական հիմնարկներում հատուկ միջոցները՝ որպես զսպման միջոց կիրառելու պրակտիկան:

15. Բացառել ժամկետանց հատուկ միջոցների (արցունքաբեր գազ) առկայությունը և կիրառումը ՔԿՀ-ներում:

16. Ներդնել ՔԿՀ-ներում ժամկետանց և պիտանելիությունը կորցրած՝ հատուկ և անհատական պաշտպանության միջոցների, զենքերի խոփանման կարգ:

17. Ներդնել ՔԿՀ-ների սպառազինության լրակազմում գտնվող միջոցները՝ մարդու կյանքի և առողջության նկատմամբ նվազ վտանգավորություն ունեցող միջոցներով փոխարինելու իրավական կառուցակարգ:

18. Ապահովել հատուկ միջոցների և զենքերի պահպանության պատշաճ պայմաններ և երաշխիքներ՝ բացառելով դրանց անհարկի դուրսբերումը

զինանոցներից և հասանելիությունը համապատասխան պատրաստվածություն չանցած ծառայողներին:

19. Ներդնել իրավապահ գործառույթներ իրականացնող պետական մարմինների ծառայողների՝ ՔԿՀ-ներում և ՁՊՎ-ներում ներգործության ուժային միջոցների գործադրման մասնակցության կառավարչական իրավահարաբերությունները կանոնակարգող նորմատիվ իրավական ակտ:

20. Մանրակրկիտ վերլուծության ենթարկել ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների կամ զենքի գործադրման յուրաքանչյուր դեպք՝ անկախ ծառայողական քննության կամ քրեական վարույթ նախաձեռնելու համար նյութեր նախապատրաստելու հանգամանքից:

21. Ներդնել ՔԿՀ-ներում և ՁՊՎ-ներում ազատությունից զրկված անձանց կողմից՝ ներգործության միջոցների գործադրման իրավաչափության բողոքարկման իրավական կառուցակարգ՝ դրա վերաբերյալ ազատությունից զրկված անձանց շրջանում անցկացնելով իրազեկման աշխատանքներ:

22. Օրենսդրությամբ ամրագրել հատուկ միջոցների և զենքի գործադրման յուրաքանչյուր դեպքի վերաբերյալ կազմվելիք արձանագրության ձևերը և լրացման ենթակա թիրախային հարցադրումները:

23. Ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների կամ զենքի գործադրման յուրաքանչյուր դեպքից հետո դրան մասնակցող բոլոր ծառայողների և վերադասների կողմից կազմել հանգամանալից զեկուցագիր՝ դրա գործադրման օրինականության, կոնկրետ հանգամանքներում բացարձակ անհրաժեշտության և առկա վրանգին խստորեն համաչափության վերաբերյալ:

24. Օրենսդրությամբ ամրագրել ՔԿՀ-ներում և ՁՊՎ-ներում ազատությունից զրկված անձանց նկատմամբ ներգործության միջոցների գործադրումից հետո կազմվելիք զեկուցագրերի պատճենը՝ փվյալ անձանց ևս փրամադրելու պարտադիր պահանջ:

25. Ստեղծել ՔԿՀ ծառայողների հանդերձանքի համապատասխան անհատականացման և նույնականացման նշաններ՝ օրենսդրությամբ ամրագրելով դրանց պարտադիր կրումը:

26. Հրապապ քայլեր ձեռնարկել բոլոր ՁՊՎ-ներն օրենսդրության պահանջներին համապատասխան տեսա(ձայնա)գրման համակարգերով կահավորելու ուղղությամբ՝ ծառայողների գործունեության ընթացքում հնարավոր չարաշահումների հայտնաբերման, արդյունքների պարզաճ գննության և ամրագրման նպատակով:

27. ՁՊՎ-ներում տեսաձայնագրման սարքերի համար նախատեսել համապատասխան տեխնիկական չափորոշիչներ:

28. Սահմանել ՁՊՎ-ներում տես(ձայնագրման) համակարգերին հասանելիություն ունեցող անձանց շրջանակը, ինչպես նաև դրանց պահպանման ժամկետները:

29. Հաշվի առնելով, որ բժշկական օգնությունն ու սպասարկումը հանդիսանում են չափազանց կարևոր նշանակություն ունեցող պայման՝ ներգործության հիշյալ միջոցների հեղինակները վրա հասած հնարավոր բացասական հեղինակների հայտնաբերման և հակազդման համար, անհրաժեշտ է ՁՊՎ-ներում տեղի ունեցող ներգործության բոլոր դեպքերում՝ անկախ տեսանելի հեղինակների առկայությունից կամ անձի գանգապների մասին հայտնելուց, կազմակերպել և իրականացնել անհրաժեշտ բժշկական հետազոտությունները:

30. Ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների կամ զենքի գործադրման յուրաքանչյուր դեպքից հետո՝ բոլոր տեսակի փաստաթղթերում պարշաճ արձանագրել ազատությունից զրկված անձանց և քրեակարարողական ծառայողների սրացած մարմնական վնասվածքները:

31. Անհրաժեշտ իրավական գործիքակազմի կարարելագործմամբ ապահովել ՔԿՀ և ՁՊՎ ծառայողների գործողությունների իրավաչափության գնահատման նպատակով ընթացող քննությունների միասնական պրակտիկան:

32. Անկախ նույն դեպքի վերաբերյալ նախաձեռնված քրեական վարույթների հանգամանքից, քրեակարարողական ծառայությունում և Ոստիկանությունում ներգործության միջոցների իրավաչափության և պրակտիկայում հանդիպող ռիսկերի վերհանման և գնահատման նպատակով իրականացնել համապատասխան ուսումնասիրություններ:

33. ՔԿՀ-ներում և ՁՊՎ-ներում ներգործության հիշյալ միջոցների ճշգրիտ հաշվառման նպատակով ներդնել պարշաճ և բազմաբովանդակ տվյալներ պարունակող վիճակագրական հաշվառման համակարգ:

34. Ազատությունից զրկման վայրերում ներգործության միջոցների կիրառումից հետո պարտադիր կերպով կազմակերպել անձի բժշկական զննություն անցնելու հնարավորությունը, իսկ բժշկական զննություն անցնելու վերջինիս համաձայնության դեպքում պարշաճ արձանագրել նրա գանգապներն ու օբյեկտիվ զննության արդյունքները, ինչպես նաև նախաձեռնել օրենսդրությամբ սահմանված բոլոր միջոցները՝ կիրառած ներգործության միջոցների ընթացակարգերի օրինաչափությունը ստուգելու համար: